Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзагакнъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

# ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովեան փողոց, № 22, տուն Խանդամիեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարերկրացիք պէտք է գրեն՝ Тифлисъ. Редакція „Ардзагакнъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՕՐ. Ե. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ
Տեղափոխուեց Սաղոմյա և Վելեամինովսկայա փողոցների անկիւն տուն Օչանեանի։
Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում գիմնազիաներ, Ռէալական և այլ Պետական դպրոցները մտնելու համար։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՆԱՅՆ ՕՐ։
(5—2)

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ
Բացուած է ստորագրութիւն
„БРАТСКАЯ ПОМОЩЬ
ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“
(ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ)
Դրական գիտական ժողովածուի համար, որ շուտով լոյս կընծայուի։
Ժողովածուի մէջ, ի միջի այլոց տպուած են ... Կ. Թ.-ի, Ա. Մ. Ժեմչուժնիկովի, (լիակատար փակսիմիլէ), Ի. Ա. Բէլոուսովի, Վ. Գոլովաչեովսկու, Սավէլէվի, Բալմոնտի, Օ. Է. Կորշի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բորովիկովսկու, Ե. Կ. Ալիբեկեանցի, Ս. Ի. Չախոտինի, Կոչեվիչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Բելոուսովի, Կանտոի, Ալ. Ծատուրեանի, Յ. Թումանեանի և այլոց։ Նամակներ—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալթիկովի (լիակատար փակսիմիլէ), Լ. Ն. Տոլստոյի (լիակատար փակսիմիլէ) գրոյցներ—Դ. Ն. Մամին Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի, Վ. Դ. Կորոլէնկոյի, Ն. Ն. Զլատովրատսկու, Ասսախովի, Ն. Դ. Տելեշովի, Ա. Ա. Վեսեոլովսկու և այլոց. հետեւեալ պրոֆեսորների յօդուածները.—Պ. Ն. Միլիւկովի (Դրահովսկու զասախօսութեանց անյայտ դասընթացը) Ի. Ի. Թարխանովի, Մ. Մ. Կովալեվսկու, Կ. Ա. Թէմիրազիեվի, Ա. Ն. Կարէեվի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Ստորոժենկո, Վ. Փ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Խալաթեանցի, կոմսուհի Պ. Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Քանանեանցի, Վ. Ա. Գոլցէվի, Բուկվայի, Դիոնէօի, Ն. Ա. Բելոզըօվիի, Բարոն Հատկիբերգի, կոմս Լ. Ա. Կամարովսկու, գեներալ Պոտտոյի, Պ. Ն. Օրնենսկու, Ա. Ն. Սազանովի, Ա. Ս. Խախանովի, Չարանեանի, Վ. Ե. Երմիլովի, Վ. Վ. Վերեշչագինի, իշխան Է. Է. Ուխտոմսկու, Վ. Ա. Գոլմստէմի, Ս. Դ. Մախալովի. Լ. Զ. Մսերեանցի, Վ. Ե. Երմիլովի, Գ. Ա. Ջանշեանի, Ի. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և այլոց։
Ցանկացած կլինին Յ. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի չըջանկարները, աւելի քան 100 տեսարաններ Անդրկովկասի և Տաճկական-Հայաստանի, հեղինակների փակսիմիլէներ, պատկերներ, ի միջի այլոց Բելինսկու, նրա ընտանիքի, Գրանովսկու, Սալտիկովի, կոմս Լորիս-Մելիքեանի, Բելոզըօվիի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զարուդնայի, Կաթուղիկոս Մկրտիչ I ի, հայր Ալիշանի, Աղամեանի, գեներալ Լազարեանի, Տէր Ղուկասեանի, Ջէլկովնիկեանի, Յ. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանեանի և այլոց պատկերները։
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է. «Ռուսսկիյա Վեդոմոստի» լրագրի գրասենեակում, նոյնպէս Կարաբասնիկովի (Մախովայա) «Տրուդ» (Տվէրսկոյա), «Նովօյէ Վրեմիայի» և Վոլֆի (Կուզնեցկիյ Մոստ) «Ռուսսկայա Միսլի» (Նիկիտսկայա) գրավաճառանոցներում։
Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 4 ռուբլ., շքեղ թղթի վրայ 5 ռուբլի, գիրքը լոյս տեսնելուց յետոյ գինը կ'աւելանայ։
Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6, кв. 1.
Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւններից խնդրվում է արտատպել ներկայ յայտարարութիւնը։
Խմբագիր—ԴՐ. ՋԱՆՇԵԱՆ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
—
Մահմեդական մոլեռանդութեան գրգռման կարելիութիւնը։
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կառավարչական շրջաբերականի յատուկ հայկական շարժումների մասին։ Կիրակնօրեայ տեխնիքական դասընթացներ։ «Լումայից»։ Ժամանակագիր Ձորիհիյայում։ Ուրգարտի գործարանի վրայ յարձակուող աւազակները։ Համզաչիմանից։ Ձուլաւէրից։ Իգդիրից։ «Լումայ» հանդէսը։ Կանանց բժշկական համալսարան։ Տիֆլիսեանդրի վանահօր հաշիւը։ Նամակ Իգդիրից։ Նամակ Կաղզուանից։ Նամակ Ջուլավէրից։ Սեւանի ծովը։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՓԵԼԻԵՏՕՆ.—Սուլթան և պետութիւնները։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹԵԱՆ ԳՐԳՌՄԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ

—

Կրետէի մահմեդականները դիմում են Բ. Դրան և խնդրում, որ Կրետէում տիրապետող անիշխանութեան վերջ տրուի։ Եւրի այս հիման վրայ Դուռը ուզում է մեծ պետութեանց մի տարօրինակ առաջարկութիւն։ Նա առաջարկում է պետութեանց, որ նրանք յետ կանչեն Կրետէից իրանց զօրքերին ու նաւատորմիղն և ուղարկեն այնտեղ խառն յանձնաժողով, մասնակցութեամբ տաճիկ ներկայացուցիչների. Կրետական գործերը կարգաւորելու համար։ Եթէ յիրաւի Կրետէի անիշխանութեան դէմ եւրոպական զօրքերն ու նաւատորմիղներն անկարող են գտնվում, ինչ պիտի կարողանայ անել մի խառն յանձնաժողով նրա առաջն առնելու համար։

Բայց այստեղ մի գաղտնի միտք կայ։ Երևի տաճիկ կառավարութիւնն այնքան մեծամտած է իր վերջին յաղթութեամբ և այնքան յափշտակված, որ անտեղի առաջարկութիւններ անել անգամ չէ քաշվում, իրան Կրետէի տէր համարելով։

Այս հանգամանքը նկատման արժանի է։

Թէև յաղթութիւնը Յոյների դէմ շատ մի աննշան երևոյթ է, բայց սուլթանը աշխատում է նրան սխրագործութեան կերպարանք տալու։ Ամսոյս 19-ին իր ծննդեան օրը սուլթանը իր շնորհակալութիւնը յայտնեց սպաներին և զինուորներին, որոնց բաժանեցին և առանձին շքադրամներ այդ յաղթութեան առթիւ, ասելով, որ ինքն երբէք այնպէս երջանիկ չէ եղել ինչպէս այժմ։ Ակնյայտնի է, որ այսպիսի յայտարարութիւնը ընդունակ են գրգռելու մահմեդականների պատրիոտիզմ, որոնք առանց այն էլ խիստ հպարտ և... փչացած են։ Մահմեդականների մոլեռանդութիւն գրգռելը շատ հեշտ է։ Դրան վկայ են 1894-95 թուականների հայկական կոտորածները։ Հիմք կայ երկիւղ կրելու, որ երբ խաղաղութեան հաստատութիւնից յետ տաճիկ զօրքերը կվերադառնան ասիական նահանգները, անշուշտ կընդառնեն այդ յափշտակութեան և մոլեռանդութեան զարգանալուն, ուրին կառավարութիւնն էլ իր կողմից է հովանաւորում, ինչպէս անում էր 1893 և 94 թուականներին, որի հետեւանքն եղան 1894-95 ի սարսափելի կոտորածները հայաբնակ գաւառներում։ Եթէ Աստուած մի արասցէ նոր վտանգ սպառնալու լինի Հայերին, դա տեղի կ'ունենայ աւելի անյաջող հանգամանքներում Հայերի համար, որովհետև, ինչպէս Դրան վերև յիշուած առաջարկութիւնը ցոյց է տալիս, տաճիկ կառավարութիւնը չափազանց յափշտակուած իր երևակայական մեծ յաղթութիւնից կարծես բնաւ կորցրել է խոհեմութեան զգացմունքը։

Աչքի առաջ ունենալով մահմեդական մոլեռանդութեան զօրանալը, որ նորանոր թարգուներանց առիթ կարող է տալ արեւելքում, մեծ պետութեանց հարկ է ամուր պահել եւրոպական ներդաշնակութիւնն, որ տաճիկ կառավարութիւնը զսպող ամենազօրեղ ոյժն է և նրա աղդուճնշումն միայն կարող է Դրան ըսթափեցնել անմիտ յափշտակութիւնից։ Յայտնի է, որ տաճիկ կառավարութիւնը միշտ օգուտ քաղել է աշխատում ամեն աննշան տարաձայնութիւնից մեծ պետութեանց մէջ, նրա քաղաքականութիւնը դրա վրայ է հիմնուած։ Ուստի և արեւելեան խնդիրը լուծելու և արեւելքը խաղաղացնելու միակ միջոցը համարելի է մեծ պետութեանց ներդաշնակութիւնն, որի ճնշող ծանրութիւնը միշտ պէտք է զգալի լինի մահմեդական մոլեռանդութեան համար, այս թէ ոչ նոր թարգութիւնը կարող են վտանգ սպառնալ և ընդհանուր խաղաղութեան։

### ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

ՌՈՒՍ. ՏՈՐԳԱԿ. ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից հեռագրում են օգոստ. 28 ից.—Սուլթանն առաջարկում է որ Թեսալիայից դուրս հանուեն թուրք զինուորները մի ամսուան ընթացքում խաղաղութեան նախապատրաստական պայմանագիրն ստորագրելուց յետոյ։ Յունական նոր և հին սահմանների վրայ պետութեանց կօնտրօլ նշանակելու վերաբերմամբ համաձայնութիւն կայացած է։ Դեսպանները վճռել են Կրետէի մասին բանակցութիւններ չվարել մինչև խաղաղութեան պայմանների ստորագրուելը։ „Times“ ին հեռագրում են Կ. Պոլսից թէ դեսպանները, երկուշաբթի իրանց կառավարութիւններից հրահանգ ստանալուց յետոյ՝ ընդունեցին Սուլթանի նոր առաջարկութիւնները փոքր փոփոխութիւններով և ոչ պաշտօնապէս ներկայացրել են այդ առաջարկութիւնները Թէֆիկ-փաշային, որի վրայ լաւ տպաւորութիւն են արել։ Թուրխանում բանակցութիւնները վերսկսուել են հինգշաբթի օրը։

Կանէայից հեռագրում են «Times»-ին, թէ Ջէվադ փաշան գնաց Րէթիմնօ և Կանդիա։ Նրա միսիան անյաջող է համարվում և ասում են թէ Ջէվադ-փաշան խնդրում է իրան յետ կանչել Կրետէից։

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Կավկազ» պաշտօնական լրագրի № 299-ի մէջ տպագրուած է Պետերբուրգից, ռուսական գործակալութեան ուղարկած յատուկ հեռագիրը.

«Պրավիտելստվեննիյ Վեստնիկ» ի (կառավարչական տեղեկագիր) մէջ տպագրուած է հետեւեալը. «Մամուլի մէջ ժամանակ առ ժամանակ երեւում են լուրեր այն մասին, թէ օսմանեան պետութեան սահմաններում երևան են գալիս հայկական կոմիտեներ և շրջաններ, որոնց վերագրվում է, թէ մտադիր են անցեալ տարուան օրինակին հետեւելով գիմել բռնութիւնների և իրանց ցեղակից ազգաբնակութիւնը գրգռել անկարգութիւններ կատարելու։ Ցաւալի, չէ կարելի չնկատել, որ մասամբ հաստատվում են այդ տեղեկութիւնները՝ դեռ նորերս տեղի ունեցած գինեալ ընդհարումներով տեղական հայերի և քրդերի միջև թուրք-պարսկական սահմանի վրայ և նոյնպէս այն յանցաւոր չարամըտութիւններով, որոնք կատարուեցին Թիւրքիայի նոյնիսկ մայրաքաղաքի մէջ և դուրս եկաւ, որ յանցաւորները գրեթէ բացառապէս հայեր են և գլխաւորապէս եկւոր հայեր։ Հարկ չկայ ցոյց տալ, թէ որքան անմիտ են այդպիսի գործողութիւնները։ Հասարակական կարծիքը բարձրաձայն դատապարտեց դըրանց, ոչ միայն այն չարիքների պատճառով, որ այդպիսով հասցնում են իրանց մերձաւորներին զոհելով, այլև ի նկատի ունենալով այն անհիմն բորբոքումներն ու յուզումները, որոնք կարող են ծագել խաղաղ հայ ազգաբնակութեան մէջ։

Մեր կառավարութիւնը իր կողմից չէ թագցրել իր հակակրութիւնը դէպի հայկական ագիտացիան, որ չկարողացաւ ազգաբնակութեան որևէ օգուտ բերել, այլ ընդհակառակն միայն աւելի վատթարացնում է այն պայմանները, որոնց ծանրութեան դէմ ագիտատորներն ըստ երևութին կռւում են համարում բողոքել։ Պէտք է յուսալ, որ հայ ազգաբնակութեան բարեմիտ մասը օրինակելի գործով ցոյց կըտայ իր վերաբերութիւնը եղած անցքերին և ագիտացիայի ղեկավարների վրայ պէտք եղած ազդեցութիւնն անելով՝ նոր դժբաղդութեանց առաջը կ'առնէ»։

⁂

«Լումայ» հանդիսում կարդում ենք, «Հանգուցեալ բազմահմուտ մագիստրոս Տ. Գաբրիէլ քահանայ Պատկանեանցը թողած է մի ձեռագիր ընդարձակ երկասիրութիւն «Հարիւրամեակ Նոր-Նախիջեւան քաղաքի» վերնագրով։

Այդ երկասիրութիւնը պարունակում է իր մէջ Անւոյ և նրա բնակիչների գաղթականութեան անցքերի համառօտ նկարագիրը, Նոր-Նախիջևանի հիմնարկութեան և նորա հարիւրամեայ լիակատար և բազմակողմանի պատմութիւնը, խիստ հետաքրքրական և յոյժ կարեւոր մանրամասնութիւններով, Նոր Նախիջեւանի այժմեան հայ բնակչաց շատերի տոհմագրական նկարագիրներով և բազմաթիւ հետաքրքրական այլ պատումներով ու յաւելուածներով, որոնք առընչութիւն ունին այդ ժողովրդի պատմութեան հետ։

Այդ մեծ գործի ինքնաձեռագիր օրինակը ... յանձնած է Կ. Պոլսի Բերայի աւագերէց շնորհազարդ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանին, որն իր կողմից բարեհաճել է թոյլատրել մեզ հրատարակութեան տալու։

Արդ՝ ի նկատի ունենալով այդ ընդարձակ երկի կարևորութիւնը ժամանակակից պատմութեան համար՝ մենք կարծում ենք, որ կըգտնուին Նոր Նախիջևանցիների մէջ անձինք, որոնք կըցանկան լոյս ընծայել նորան։ Գիրքը «Լումայի» գիրքով 1200 երեսներից կըլինի բաղկացած»։

⁂

Այս տարի Թիֆլիսի քաղաքային արհեստաւորաց դպրոցին կից բացուեց կիրակնօրեայ տեխնիքական դասընթացներ։ Այդ դասընթացներին գրուեցին բազմաթիւ տեղացի արհեստաւորներ, որոնք ռուսերէն լեզուն կամ չգիտեն բոլորովին, կամ վատ գիտեն և որովհետև այդ դասընթացներում դասատուութիւնը լինում է ռուսերէն լեզուով, այդ արհեստաւորների համար անհնարին էր դառնում օգտուել դասընթացներից, ուստի արհեստաւորաց դպրոցի վերատեսուչ պ. Դանիլով միջնորդում է Կովկասեան կրթական իշխանութեան թոյլ տալ, որ յատուկ բաժանմունք բացուի տեղացիների համար, ուր առարկաները աւանդուեն նրանց մայրենի լեզուով։

⁂

Թիֆլիսում հասունութեան վկայական ստացող օրիորդներից խնդիր են ներկայացրել կանանց բժշկական համալսարան մտնելու համար 11 հոգի և դրանցից ընդունուել է միայն մի հոգի, օր. Ն. Կանդրատեվա։

⁂

ՀԱՄԶԱՉԻՄԱՆԻՑ.—Մեր կողմերը աւազակապետներ չեն եկել, բայց հասարակ գողերը պակաս չեն, որոնք ճամբորդներից խլում են փող, եզներ, անգամ անիւներ, որ մալականների մօտից գնած՝ իրանց գիւղերն են տանելիս լինում։ Մեր հացի բերքը այս տարի սպասածից լաւ է, շատերը ափսոսում են, որ քիչ են ցանել։ Գետնի սակաւութեան պատճառով մեր գիւղից հարիւր տուն մտադրուել են բռնել Ղարսի կողմերը։ Խնդիրը վաղուց են ներկայացրել Նահանգապետին և մի քանի անձինք գնացել նայել են Մըէն անուանուող հին բնակատեղին, ուր հայկական վանք կայ էլ այժմ։ Ջուր չկայ ընդարձակ դաշտագետիններում, յոյսերը Տեկոռ գետի վրայ է։ Դաղթող հայ գիւղացիք ջուր հանելու բոլոր հոգսն ու ծախսը իրանց վրայ են առնում, միայն թէ շրջակայ քրդերը իշխանութեան միջոցով սանձահարուելով՝ գաղթողների դէմ խոչընդոտներ չհանեն ջրի առիթով։

Մեր գիւղը վաղ ժամանակներից սեպհական տանուտէր ունէր։ 2 տարի է, որ տեղական իշխանութիւնը Նիկիտինօ և Վօսկրեսենովկա մալական համայնքները մեզ հետ միացնելով մի տանուտէրութեան են թարկեց։ Առաջինը մեր գիւղից $2^{1}/_{2}$ վերստ է հեռու, երկրորդը 5 վ.։

Նահանգապետի վերջին այցելութեան միջոցին վօսկրեսենցիք խընդիր տուին որ իրանց առանձնացնեն։ Սրանց զարոյթը նրա վրայ է գալիս, որ հայ տանուտէրը կիւրակի օրերն է ժողով անում, իր մօտ կոչում մալականներին, երբ նրանք աղօթատուն պիտի գնան—հանգստութեան պիտի նուիրուեն՝ խօսք տալով աղմուկներից։ Մենք մեր վէճերը առտնին ենք վերջացնում մեր ... ներկայութեամբ, որ կիւրակի օրերը աղօթելու տեղ կախեններով չըքաղուենք։ 54 անձից տանուտէրը բողոքել էր, որ չեն եկել ժողովի (մոռանում է, որ 5 վ. հեռու են), հաշտարար դատարանի միջոցով տուգանքի ենթարկել տուաւ, մարդագլուխ մի ռուբլի։

⁂

«Կասպի» լրագիրը հաղորդում է, որ ժամանակաւոր զինուորական դատարանը Բագւում օգոստոսի 26-ին սկսել է քննել Ուրգարտի գործարանի վրայ յարձակուող աւազակների գործը։ Ինչպէս յայտնի է ընթերցողներին, այդ յարձակումը ամենայանդուգն մի կողոպուտ էր օր ցերեկով, երկաթուղու գծի վրայ։ Մինչև 30 վկաներ են կանչուած ցուցմունք տալու։

⁂

ՁՈՒԼԱՒԷՐԻՑ մեզ գրում են.—«Երկաթուղու գիծը Բորչալուի հովտում կէս կայարան պիտի ունենար Սարալ Թիւրքաբնակ գիւղի մօտ, որ հեռու է մեր բազմամարդ աւանից 4 վերստ։ Հասարակութիւնը միամիտ նստելով խընդիր չմատուց որևէ տեղ—հաւատալով գաւառապետից լսած խոստմունքներին։ Այժմ միայն տեսան, որ յիշեալ կէս կայարանը շինուելու է Իմիր Թիւրքաբնակ գիւղի մօտ. մեր աւանից 8 վ. հեռու։ Այդ փոփոխութիւնը նրա համար է, որ կայարանները շինուին Սադախլօ և Ջանղար տեղերում, որոնք կից են իշխ. Սումբատովի կալուածներին։ Այս օրերս մեր հասարակութիւնը խնդրամատոյց եղաւ պետական երկաթուղիների վարչութեան անդամ պ. Դոմբրովսկուն, որ կէս կայարանը կրկին Սարալ գիւղի մօտ կառուցուի, և Ձուլավէրի պէս ընդարձակ աւանը բոլորովին հեռու չմնայ գծից։

⁂

ՍՂՆԱԽԻՑ հաղորդում են մի հայուհու սոսկալի մահուան մասին։ Այդ թշուառ կնոջ ամուսինը, Ցակովբեանց, խելագարուել էր. խեղճ կինը տեսնելով որ իր ամուսինը չէ բուժվում, յուսահատութիւնից ինքն իր զգեստների վրայ նաւթ լցրեց և վառեց։ Երեխաների աղաղակների վրայ հասան դրացիները, բայց անհնարին եղաւ ազատել այրուածին, որ ծանր տանջանքներով մեռաւ։

⁂

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. Վանայ շրջակայքում տեղի ունեցող հայերի և քրդերի ընդհարման լուրը հասնելով մինչև Բայազետ, աւելի են գրգռում տեղական քրդերի նախանձն ու վրէժխնդրութիւնը, որոնք առանց ժամանակ կորցնելու յարձակվում են Արծափ հայաբնակ գիւղի վերայ, սպանում են մի քանի հոգի և կողոպտում են նրանց ունեցած չունեցածը։ Այդ դէպքը սարսափ է ազդել արծափցիների վրայ, որոնք մտածում են գաղթականութեան նոր հոսանք սկսելու մասին, «այդ էր պակաս այդ էլ ժամանեց»։

***

Ստացանք արժանապատիւ Հայր Գիւտ քահանայ Աղանեանի խմբագրութեամբ լոյս տեսնող Լումայ գրական հանդէսի երկրորդ տարւան Բ. գիրքը։ Այս հատորը աւելի ստուար է և նիւթերով աւելի հարուստ քան նախկինները, բովանդակութիւնը բազմազան է և հետաքրքրական։ Գրքի բովանդակութեան մասին կխօսենք «Արձագանքի» մերձակայ համարներում։

***

Նագասակիի (Ճափոնիա) ռուսաց հիւպատոսը—ինչպէս իմացել է «Սիբիր» լրագիրը—տեղեկացրել է՝ թէ Ճափոնիայում ժանտախտ երևաց, ուստի Վլադիվաստոկը վտանգի է ենթարկուած։

***

Ծիրանաւորի ուխտատեղեաց վանահայր արժ. Սարգիս Չիլոխանցը մեզ խնդրում է հրատարակել հետևեալը.

Նախ և առաջ ի խորոց սրտի շնորհակալութիւն եմ յայտնում բոլոր այն անձանց, որոնք վերջերս նիւթական միջոցներով օգնեցին ինձ՝ նուաստիս, կատարելու նպատակս, երկրորդ՝ սրբազան և բարոյական պարտք եմ համարում հայ հասարակութեան տալ արծւ շինութեանց և նորոգութեանց ծախուց հաշիւները։ Դաշի եկեղեցու և խորանի պատերը սուաղելու, եկեղեցու և եկեղեցապատկան սենեակների տանիքը նորոգելու և լուսամուտներ շինելու համար ծախսուել է 121 ռուբլի, թիթեղեայ խողովակներու համար 42 ռուբլի։ Հիւսնին վճարուել է եկեղեցու երկու մասի առաստաղը շինելու և զանազան նորոգմանց համար 35 ռուբլի, բնեռների համար 4 ռուբլի, քանի մի սենեակների պատերը սպիտակեցնելու և թուղթ կպցնելու համար ծախսուել է 10 ռուբլի։ Ուրեմն ընդամենը ծախս է եղել երկու հարիւր տասներկու (212 ռուբլի)։

***

### ԾՈՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

ԻԳԴԻՐ, 21 օգոստոսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Բժշկութեան բազմաջոյն աշխարհութեան արժանի և օգտակար ճիւղերից մէկն էլ ծաղկահատութիւնն է, ծաղկի պատուաստը.

Բազմադարեան այդ հիւանդութիւնը՝ զանազան ժամանակներում, զանազան աշխարհներ հեղեղեց և իր մահհրաւէր պատկերներով համաճարակ տեսքի հասակ ստացաւ երկրագնդի բոլոր մասերում. Ժողովուրդը այդ վարակիչ հիւանդութեան ահեղ և անհասկանալի կերպարանափոխութեան հակառակ՝ աւելի համեստ անուամբ կնքեց նրան, օգտուելով նոյն իսկ նրա բնական գրաւչութիւնից, ծաղկանման սպիներից։ Այդ գժտւայլին սարսուռ ազդող զօրութիւնը սարսափեցրեց ընդհանուր մարդկութիւնը. իւրաքանչիւր ազգ, ժողովուրդ կրկնել նրա զանութիւնները, սկսեց ակնածութեամբ վերաբերուել դէպի նա՛ նրանում թագաւորող գաղտնիքն ու հոգեկը երևան եկաւ ժողովրդի մէջ ուրիշ գոյներով. որոնք ազդելով նախապաշարեալ ամբոխի մտքի և թոյլ երևակայութեան վերայ, պատկերացրին նրան ժողովրդի մտքում գաղափարի առաջ որպէս մի մարմնացեալ հրէշային ոգի. ձախ ձեռքում բռնած կայայտ հեղուկով լի մի սրուակ, իսկ աջ ձեռքում մի հատ ասեղնաւոր սև մտրակ։

Այդ գերբնական ոգին անտեսանելի է հողածին մահկանացուներին և միայն երազների ու տենդային զառանցանքների մէջ երևում է նրանց, որոնք պիտի ծաղիկ հանեն, նա՝ որին կամենում է ենթարկել այդ անողորմ հիւանդութեան, հարուածում է մտրակով և անմիջապէս սրսկում է կայայտ հեղուկը. իսկ երբ կամենում է չմեռցնել, այն ժամանակ միայն հարուածում է, առանց հեղուկի սրսկման։ Ահա այդ հրէշը, ոգիների աշխարհում ապրող այդ սրբուհին, որին ժողովրդական ֆանտազիան է ստեղծել, կոչվում է ծաղկամայր։

Մինչդեռ ամբոխը խարխափում էր նախապաշարմունքի և պղտորութեան խաւարի մէջ, այդ ճգնաժամին գիտութիւնը իր լուսաւոր գաղափարներով մրցում էր նրա դէմ իր անհամեմատ ոյժերով, ձգտում էր սթափեցնել նրան անտի յոյսերից և մեծ յաղթանակով հրապարակ գալու եկաւ անգլիացի երևելի դոկտոր Ջեններ լոյս աշխարհ բերելով ընդհանուրին ապահովեցող փրկիչ հրաշագործութիւնը ոչնչացնող գիւտը, որ կոչվում է ծաղկահատութիւն կամ պատուաստում։

Որչափ գիտութիւնը իր ծաւալը ընդարձակեց ծաղկի պատուաստման մշակութեան մէջ, որչափ նա իր անխոնջ ձգտումներով հասաւ գործի կատարելութեան, այնուամենայնիւ տգիտութիւնն ու նախապաշարմունքը, որպէս հակառակ ախոյաններ, դիմադրեցին նրան ներմուծելու գործածութեան մէջ.

Ժողովուրդը պահպանեց իր սահմանափակ կեանքի մէջ իր համոզմունքն ու բնական բժշկական ձևերը. համարելով գիտական բժշկականութիւնը որպէս գիւական և կախարդական միջոցներ։ Ժողովուրդը առանձնապէս պահպանում է իր տեսակէտով ծաղկի վերաբերեալ կանոնները, ա) հիւանդին չ՛լողացնել, որպէսզի ծաղկի հիւթը չփչանայ, բ) հիւանդի մարմինը աչքի ցոյց չտալ, որովհետև կարող է վնասուել վատ և չար աչքերից. գ.) որպէսզի ծաղիկը չվնասէ աչքի լոյսին անպայման պէտք է հիւանդութեան առաջին օրից ուղարկել մի որևէ աղքատի տուն եօթ թաժայ հաց, մի սև հաւ և մի ամանով աղ, որպէս առհաւատչեայ հիւանդի առողջութեան գոհաբերելու ծաղկամոր համար, դ) լուսնին բոլորովին ցոյց չտալ, որովհետև լուսնի լոյսը խիստ կերպով է ազդում հիւանդի վրայ և չորացնում է վէրքերը. այդպիսով աւելի բարկանում է ծաղկամայրը և չարաչար վրէժխնդիր է լինում հիւանդից։ Վերջին ժամանակներում բժշկականութիւնը տեսնելով այն գլխծ մեղքը, որոնք գործադրվում են օրէնքի հակառակ և այն հազարաւոր չարիքները, որոնք յառաջանում են ծաղիկը չպատուաստելու նախապաշարումից և անհոգութիւնից, մի ակ միջոցն էր իշխանութեան ոյժով տարածել գաւառներում ժողովրդի մէջ ծաղկի պատուաստը, բայց այսպիսով դարձեալ իր նպատակին կատարելապէս չհասաւ։ Լեռնական տգէտ ամբոխը, որ իր փոփոխական կեանքով, իր կենցաղութեան պայմաններով ընդ միշտ հակառակ է եղել բժշկականութեան սկզբունքներին, այս դէպքում ևս իր համոզմունքն անխախտ պահպանեց, նա հաստատապէս իր ուղղութիւնը չշրջելով, չենթարկելով ոչ մի խրատական ազդու և համոզիչ մտքերի, բացի հետևեալ խօսքերից. «Սրանց Աստծու ուզածը չի կարող լինել, և ինչ որ Աստուծուց գայ, բարին նա է»։

Այն ժողովուրդը, որ ապրում է լեռնային բարձրութիւնների վերայ և գաւառի հեռաւոր ու մութ անկիւններում, որ միայն բժշկի անունն է լսում, առանց նրան տեսնելու, այդ նահապետական մարդիկը, իրենց յատուկ մասնագիտութեամբ հիւանդութեան զանազան տեսակ բժշկութիւնները իրենք են կատարում ... կազմում են լեռնային բոյսերը և նրանց արմատների բաղադրութիւնները։ Դա աւելացնելու համար հիւթը իրենք են վերցնում նոյն իսկ ծաղկով վարակուած հիւանդից, առանց ուշադրութիւն դարձնելու նրա հակառակ ազդական պայմաններին, որ կարող է պարունակել իր մէջ ժառանգական և պատահական զանազան վարակիչ ախտեր ու հիւանդութիւններ։ Ահա թէ ինչ տեղերից է մեզ յայտնվում զարմանք և, իսկապէս ասած, սոսկումն, երբ լսում և տեսնում ենք յանկարծ այն պարզ և աշխարհ չտեսած գիւղացին, վարակուած սիֆիլիսով կամ վեներական տեսակ, տեսակ ցաւերով, թէ մեծ, հասակ առած մարդիկ և թէ նոյն իսկ ծծկեր երեխաներ, որոնք երկար ժամանակ անուշադրութեան տալով, համաճարակ բնաւորութիւն ստանում։ Գիւղացու իւրաքանչիւր անդամ ծաղկահատութեան պարզ և տարրական կանոններին ծանօթ է. եօթ հատ կարի ասեղներ միասին կապում են և այդ ասեղներով ծակծակում են երեխայի աջ ձեռքի բազկի և ցուցամատների մէջտեղ, այդ կերպ ծաղկահատութիւնը՝ ինչպէս փորձերը ցոյց են տալիս, իր վնասակար հետևանքն է ունենում, որից յետոյ երեխան կրկին և աւելի խիստ կերպով է ենթարկվում ծաղիկ հիւանդութեան, մեծ տոկոսով մահուան զոհեր տալով։

Իւրաքանչիւր գաւառ, ուր միայնակ գաւառական բժիշկը դժուարանում է կառավարել, ունի և իր ծաղկահատը, որ վարձատրվում է ամսական ռոճկով, որպէս պաշտօնակատար, իսկ մի իրողութիւն, մի փաստ, որ ներկայացնում է մեզ որպէս մի տխուր երևոյթ, այդ այն է, որ ընդհանրապէս գաւառական բոլոր ծաղկահատները ընտրվում են ժողովրդական ամենատգէտ դասակարգից, որոնք բաւական չէ որ անծանօթ են գրագիտութեան, նոյն իսկ տառերի որոշման, այլ և բերանացի զանազան օգտակար հրահանգների գործադրութեան։ Իսկապէս ցաւալի իրողութիւն է, արուեստի միայն արտաքինը մեքենայաբար ըմբռնել և տիրապետել նրան, առանց հասկացողութիւն կազմելու գործի ներքին կազմակերպութեան և նրան վերաբերեալ բազմակողմանի գիտական պահանջների հետ։ Վերջապէս պէտք է հասկանալ և լաւ հասկանալ, որ արուեստն ու գիտութիւնը միայն գործադրողի գրպանների համար չեն ծառայում, այլ ընդհանրութեան առողջական պայմանները հաստատ և անխախտ պահպանելու համար։ Այդ տխուր երևոյթների վերայ հրաւիրում ենք դարձնել ում հարկն է ուշադրութիւն։

Մկրտիչ Զաքարեան.

***

ԿԱՂԶՈՒԱՆ, օգոստոսի 16.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ամսոյս 1-ին այստեղ վերադարձաւ գիւղերից Ղարսայ վիճակի յաջորդ Եղիշէ վարդապետ Մուրադեան, որպէսզի խորհրդակցի ժողովրդի հետ նոր շինուելիք եկեղեցայ մասին։ Սակայն նախ քան խորհրդակցութիւնը գիւղական ժողովուրդը աւելի քան 200 ստորագրութեամբ խնդրագիր ներկայացրեց, խնդրելով նախորդ կիրակի օրուայ երեցփոխանական ընտրութիւնը անվաւեր համարել, որովհետև անկանոն է եղել։

Ամսոյս 3-ին հրաւիրուած էին ծխականները եկեղեցի և պատարագից յետ պիտի լինէր խորհրդակցութիւն նոր շինուելիք եկեղեցայ համար։ Պատարագին հայր սուրբը մի քարոզ խօսեց ուսման և յառաջադիմութեան մասին, բայց հազիւ թէ տեղական ժողովուրդը կարողանար հասկանալ, որովհետև թէ շատ երկար էր և թէ լեզուն տեղական ժողովրդին անհասկանալի (քարոզի ժամանակ ժողովրդի մեծ մասը թողեց եկեղեցին)։

Պատարագից յետոյ ծխականները հրաւիրուեցան ուսումնարանի դահլիճը խորհրդակցութեան։ Կարճ միջոցում հաւաքուեցան 140 հոգի, որոց նախագահում էր ինքը վարդապետը։

Նախքան խորհրդակցութիւնը նոր շինուելիք եկեղեցայ մասին, հայր սուրբը յայտնեց ստացած խնդրագրի մասին և առաջարկեց ընտրութիւն կայացնել, ընտրել մի երեցփոխ և չորս հաշուեքննիչներ։ Ընտրութիւնը, հայր սուրբի թոյլտւութեան շնորհիւ, շատ աղմկալից էր և շատ անգամ խօսողներն իրար չէին կարողանում հասկանալ։

Ինչպէս ասացի, ընտրութեանը մասնակցում էին 140 հոգի, բայց կային և այնպիսի դէպքեր, որ մի տնից մասնակցում էին 4—5 հոգի, որի մասին հարց եղաւ, բայց և այնպէս նոյնիսկ հայր սուրբը թոյլատրեց ամենքին մասնակցելու, ասելով թէ ամեն ոք կարող է մասնակցել, եթէ տարիքը 21 ից անց է։

Ընտրութիւնը կայացաւ թերթիկներով և երեցփոխ ընտրուեց պ. Յ. Տէր-Յովսեփեանց—65 ձայնով, և չորս հաշուեքննիչներ՝ պ. պ. Վ. Տէր-Վարդանեան, Ա. Թաստամեանց, Իվան Բիչարեան և Գալուստ Աւշեանց։ Հաշուեքննիչները պիտի քննէին նախկին երեցփոխ. պ. Ս. Բուդաղեանի չորս տարուայ հաշիւները, այն է 1894 թ —1897 թ., ստանային, եթէ կանխիկ դրամը կայ, և յանձնէին նոր երեցփոխին միմիայն 50 ռ. (չարունակ 50 ռուբլուց աւելի չպիտի պահի մօտը), իսկ մնացած գումարը գցէին մի որևէ առևտրական գրասենեակ չահեցնելու համար։

Չնայած Մուրադեան վարդապետի այսպիսի մի կարգադրութեան, այնուամենայնիւ ճիշդ աղբիւրներից տեղեկանում ենք, որ առանց հաշուեքննիչների քննութեան, որչափ կանխիկ դրամ եղել է, առել ու հետը տարել է Ղարս, բայց թէ որչափ է և ինչու համար է ստացել՝ յայտնի չէ։

Ընտրութիւնը վերջանալուց յետ, սկսուեց խորհրդակցութիւն նոր շինուելիք եկեղեցայ մասին։ Հայր սուրբը առաջարկեց՝ թէ պ. Զ. Զանփոլադեանը համաձայնվում է շինելու եկեղեցին հետևեալ պայմանով,—որչափ ինքը ծախսել է եկեղեցու շինութեան, ժողովուրդը տարեց տարի մի որոշ գումար յատկացնի ուսումնարանի պահպանութեան, իսկ հակառակ դէպքում չի շինիլ։ Առաջարկուեց հարց թէ որչափ ծախս կերթայ շինութեան վրայ, բայց այդ մասին ոչ մի որոշումն չեղաւ, որովհետև յատակագիծ դեռ չէ ստացուած, բայց և այնպէս որոշուեց իւրաքանչիւր տարի ծխականներից ժողովել 2000 ռուբլի, մինչև գումարի լրանալը, ըստ չափու կարողութեան։

Այս մի ամսուայ ընթացքում այստեղ հաւաքուել են դարձեալ մեծ քանակութեամբ գաղթականներ, թւով 116 հոգի—23 ընտանիք—որոնք հետևեալ գիւղերից են.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | ընտ. | Համեակից | —61 | հոգի. |
| 1 | » | Թաղիաբից | . 2 | » |
| 2 | » | Ալինցայից | . 5 | » |
| 1 | » | Արծուաբերից | . 5 | » |
| 2 | » | Նորաշէնից | . 16 | » |
| 1 | » | Գազզից | . 3 | » |
| 1 | » | Բլրկայից | . 6 | » |
| 4 | » | Հափակից | . 18 | » |

Թէ արդեօք այդ խեղճերը ինչով պիտի կարողանան կառավարուել. մեծ միայն ոստիկանութեան միանուագ բաժանած 20—50 կոպէկով, քանի որ այս կողմերում տեղ չկայ գործելու և աշխատելու, իսկ իրանք էլ միջոց չունին ճանապարհուելու մեծ քաղաքներ, որ մի կտոր հաց կարողանան գտնել ճարել և իրանց ամօթը ծածկել։

Ար.

***

ՉՈՒԼԱՒԻՐ, օգոստոս 28.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ամենայն անգամ երբ թերթում եմ հայ լրագրութեան էջերը, լի եմ տեսնում նրանց աւազակների զանազան սխրագործութիւնների նկարագրութիւններով։ Այսինչ տեղը մարդ սպանեցին, այնինչ տեղը մարդ թալանեցին, մէկ խօսքով շատ սաստիկ սարսափի մէջ են գիւղացիք։ Յուլիսի ամսի 16-ին աւազակապետ Ալիի մանկով մեր գիւղից երեք վերստ հեռաւորութեամբ անտառի մէջ, այնտեղ սպանում է իր հարևան Բայրամ օղլուն, որ մի ամբողջ գերդաստանի միակ խնամողն էր։ Այս դէպքը սարսափի մէջ է գցել մեր շուլաւերցոց, և ոչ ոք չի կարողանում իր գործին գնալ, մանաւանդ Աւետիք Դալլաքեանը, Դանիէլ Դասպարեանը, Յոգի Ղարգաչեանը և ուրիշ մի քանիս, որոնց գործերն անտառի կողմերն են։ Եթէ մտնենք գիւղերը, շրջագայենք անձամբ հասարակութեան ցաւերը ու դարդերը, նրա շինելն օրնի բուն փախածութեան վտանգները, կտեսնենք տխուր պատկեր, որ կապուած է մեր թուլասրտութեան հետ։ Տեսնում ենք, որ համարեա բոլոր աւազակութիւնների պատճառն ժողովուրդի վախկոտութիւնն է, տեսնում ենք որ բոլոր մարդասպանու-

---

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արժանապատիւ Մալքոմ Մակ-Քոլի (Կանոնիկոս Ռիպոնի) Ս. Պետերբ. 1897 *)։

«Անիծեցէք զՄերովզ, ասէ Հրեշտակ Տեառն, անիծելով անիծեցէք զբնակիչս նորա, զի ոչ եկին յօգնականութիւն Տեառն, օգնական Տէր ի մէջ նահատակաց հզօրաց»։

Գիրք դատաւորաց, V, 23։

«Ստրուկ է նա, որ վախենում է խօսել
Յօգուտ անկեալների և թոյլերի,
Ստրուկ է նա, ով չէ նախապատւում
Ատելութիւնը, ծաղրը և վիրաւորանքը
Լռելեայն երկիւղին ճշմարտութեան առաջ։
Ստրուկ է նա, ով քաջութիւն չունի
Ճշմարիտ լինել երկուսի կամ երեքի դէմ»։

Լօուէլ։

Շարունակութիւն **)

### ԳԼՈՒԽ XII

#### ԻՍԼԱՄՆ ԻԲՐԵՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԻՍՏԵՄ

Այս գլուխն իբրև մի ճիշդ բնորոշումն իսլամի և նրա վարչութեան՝ մենք նրա մեծ մասն ամբողջովին թարգմանում ենք.

«Ամենը վերջապէս խոստովանեցին (աւելացնենք Անգլիայում) այն վարդապետութեան ճշմարտութիւնը, որ ես քարոզում եմ վերջին 20 տարիներս թէ գրչով թէ խօսքով, այն է՝ թէ ոչ մի ռէֆորմների ծրագիր, որի նպատակն է Դրան քրիստոնեայ հպատակներին հաւասար իրաւունքներ տալ մահմեդականների հետ—երբէք չէ կարող օրինական ճանապարհով արտադրուել սուլթանի կողմից, առանց բանի միջոցներ գործ դնելու։ Թիւրքիայի պատմութեան մէջ մի հատիկ բացառութիւն անգամ չկայ այդ ընդհանուր կանոնից։ Իսկ այդ երևոյթի պատճառն այն է, որ Թիւրքիան միւս ամեն մի մահմեդական կառավարութեան նման խիստ կրօնապետութիւն է։ Նրա քաղաքականութիւնը հիմնուած է կրօնական հանգամանքների վրայ, որոնք մնում են անջնջելի և որոնց հպատակվում է իւրաքանչիւր ուղղափառ մահմեդական, սկսած սուլթանից։ Ամեն մի առաջարկութիւն ռայաների (քրիստոնեայ հպատակներ) և նրանց իրաւանց հաւասարման օգտին, ընդունվում է իբրև խախտումն իսլամի հաւատոյ հանգանակի, որ չէ կարող անել ոչ մի սուլթան, իսկ եթէ անէ, կհամարուի դաւաճան հաւատոյ և գահընկեց կլինի շէյխ-իւլ-իսլամի ֆէտվայով, որ Թիւրքիայում օրէնքի և կրօնի պահապանն է։ Նոյնիսկ Անգլիայում կրթուած անձինք, նրանց թւում և նշանաւոր քաղաքական գործիչներն ու դիպլոմատներն այնքան մութ հասկացողութիւն ունին այդ առարկայի մասին, որ օգտակար կլինի այստեղ կարճառօտ թուել փաստերը։

Ուղղափառ մահմեդականների հասկացողութեամբ՝ Ղուրանը զանազանվում է Աստուածաշնչից և ուրիշ բոլոր կրօնական գրքերից մի էական առանձնայատկութեամբ.—Նա գոյութիւն է ունեցել յաւիտեանս յաւիտենից արաբերէն լեզուով տախտակների վրայ, եօթներորդ երկնքում, Ամենաբարձրեալի գահոյից առաջ։ Այդ տախտակներից Ղուրանն արտագրել է Գաբրիէլ հրեշտակապետը գլուխներով և թելադրել է Մուհամմէդին պարզ ձայնով, բառ առ բառ, ամեն անգամ, երբ որ հարկ է եղել, և այդ տևել է տասնհինգ տարի։ Միւս կողմից Մովսէսի հինգ գրոց յայտնութիւնը եղել է հոգւոյն և ոչ թէ ականջին, գաղափարների միջոցով և Մովսէսին ազատութիւն է տրուել մարդկանց հաղորդել այն ձևով և լեզուով, որ ինքը լաւ կը համարի։ Մովսէսի յայտնութիւնը կատարեալ չէ համարվում, ընդհակառակն նրանք համարվում են նախապատրաստական և ժամանակաւոր, պարզ մատնացոյց անելով աւելի մեծ մարգարէի վրայ, քան Մովսէսն է և աւելի մեծ յայտնութեան վրայ, որ պիտի զարգացնէ և ամփոփէ իր մէջ նաև Մովսէսի օրէնքը։ Այդ մարգարէն Մուհամմէդն է, իսկ յայտնութիւնը—Ղուրանը, որ Աստուածային կամքի վերջին յայտնութիւնն է մարդուն, հետևաբար և յաւիտեանս յաւիտենից անջնջելի է։ Այս վարդապետութիւնը պարզ ոճերով յայտնել է աշխարհին Իբն Խալդունը, որ մահմեդական աշխարհի ամենահռչակաւոր և ամենակրթուած պատմագիրն էր։ Ինքն ազգով արաբ լինելով, զանազան պաշտօններ է վարել արաբացոց տիրապետութեան ժամանակ Սպանիայում, յետոյ ճանապարհորդել է Ասիայի և Աֆրիկէի զանազան մահմեդական երկրներում ուր դրոյց և վէճեր է ունեցել մահմեդական ամենանշանաւոր օրէնսգէտների հետ, գերի է ընկել Թիմուրլանի ձեռքը, ապա դարձել է նրա հաւատարմատարը և վերջապէս ընդմիշտ բնակուել է Կահիրէում, ուր մինչև մահը մեծ մուֆտիի պաշտօնն էր վարում։ Մահմեդական աշխարհում աւելի մեծ հեղինակութիւն չկայ իսլամի վարդապետութեան և սկզբունքների վերաբերմամբ և առանց չափազանցելու կարելի ասել, որ այդ վարդապետութեան աւելի բարձր մեկնութիւն չկայ։

Բայց իսլամի վարդապետութեան և օրէնքներին ծանօթանալու համար, բաւական չէ այդ սկզբունքները փնտռել Ղուրանի մէջ. պէտք է վերցնել նաև Հադիսը, այսինքն մարգարէի խօսքերի և գործերի աւանդութեանց գիրքը, որ Ղուրանի անբաժան լրացումն և մեկնութիւնն է համարվում։ Այդ աւանդութիւնները նոյն վերաբերութիւնն ունին Ղուրանին, ինչպէս ժողովների անսխալական վճիռները Աստուածաշնչին ըստ կաթոլիկական աստուածաբանութեան։ Անկարելի է հերքել պապի անսխալականութիւնը կաթոլիկի առաջ Սուրբ Գրոց վրայ հիմնուելով, որովհետև նա Սուրբ Գրքին հաւատում է այնպէս, ինչպէս որ նա մեկնաբանում է Վատիկանի վճիռներով։ Միևնոյն կերպով ևս Անգլիայում մահմեդականների պաշտպանները դիմում են նոյն սոփեստութեանը, ապացոյցներ բերելով միայն Ղուրանից։ Բայց չէ որ իսլամի օրէնքը հիմնուած է Ղուրանի և աւանդութեանց վրայ։ Իսկ իսլամի օրէնքի անսխալական վարդապետութեանց թւումն են և հետևեալները.—եթէ ռայան մերժում է մահմեդական դառնալ, նրան առաջարկում են ընտրել երկու բան—մահ կամ փրկանք։ Ռայան ամեն տարի պիտի վճարի գլխահարկ նրա փոխարէն, որ իրան թոյլ է տրվում ապրել և ստացագրի օրինակի մէջ ասուած է. «այս տարի գլուխը ուսերի վրայ կրելու իրաւունքի փոխարէն». այնպէս որ, եթէ նա ժամանակին իր հարկը չվճարէ, ինչպէս որ այժմ չեն կարող վճարել անանկացած հայերը, կորցնում է ապրելու իրաւունքը։ Ռայայի վկայութիւնը չէ կարող ընդունուել դատարանում մահմեդականի դէմ։ Նա իրաւունք չունի զէնք կրել կամ տանը պահել։ Քրիստոնեայ հպատակը պարտաւոր է երեք օր շարունակ հիւրասիրել իւրաքանչիւր մահմեդական պաշտօնեային կամ նրա պահանջով ուրիշ ճանապարհորդին։ Փաշաները, նրանց կողոպտիչ չքախմբերը, աւազակ ոստիկանութիւնը, հարկահանները, բաշի-բոզուկները, կեղտոտ դերվիշները և այլն, և այլն, այդպիսով անվճարաբար ապրում են և կերակրվում ի հաշիւ Թիւրքիոյ թշուառ քրիստոնեաների, իսկ նրանց կանայք ևս մնում են այդ անկրօն հիւրերի կամայականութեան ենթակայ (թէև օրէնքն այդ չէ արդարացնում)։ Եթէ քրիստոնեայ մահմեդականին քրիստոնէական կրօնի դարձնէ, երկուսն էլ, այսինքն թէ քրիստոնեան և թէ նորադարձը պիտի դատապարտուին մահուան։ Ռայան չի կարող աստուածպաշտութեան տուն կառուցանել. իսկ եթէ այդ մասին նա պաշտօնական թոյլտւութիւն ստանայ (որի համար ահագին կաշառքներ են վերցնում և կեղեքում), պէտք է վերանորոգէ միայն երկրում առաջուց եղած եկեղեցիները, որոնք գոյութիւն են ունեցել երկիրը մահմեդականների ձեռքն անցնելուց առաջ. այդ վերանորոգութիւնն էլ պիտի լինի միայն հին նախագծով, առանց որևէ նոր բան աւելացնելու։

Երբեմն այդ առարկայի մասին ոչ մի հասկացողութիւն չունեցող անձինք ասում էին թէ՝ Թիւրքիայում մահմեդականներն աւելի խիստ ճնշումներ են կրում, քան քրիստոնեայք։ Դա կատարեալ անհեթեթութիւն է, որովհետև թէև մահմեդականները և քրիստոնեաներն ամենքն էլ սարսափելի ճնշումներ են կրում սուլթանի զզուելի ռէժիմի տակ, բայց ահա թէ այդտեղ ինչ զանազանութիւն կայ.—Մահմեդականներին ճնշելը հակառակ է օրէնքի, իսկ քրիստոնեաներին ճնշելը համաձայն է օրէնքի։ Առաջինները երկու իրական միջոցներ ունին պաշտպանուելու, որոնք արգելուած են քրիստոնէին, այն է—զէնք և օրէնքի պաշտպանութիւնը խնդրելու իրաւունք։ Բացի այդպէս իրաւազուրկ լինելուց՝ քրիստոնեաները վճարում են բազմաթիւ հարկեր, որոնցից ազատ են մահմեդականները։ Ես արդէն յիշեցի գլխահարկը, որ համարվում է կեանքի փրկանք. բայց նրանք ենթակայ են դեռ ուրիշ շատ հարկերի, որոնք մուսուլմաններին չեն վերաբերում, օրինակ՝ տարապարհակի (օլամ) և հարկի ամեն մի արու քրիստոնէից՝ սկսած երեք տարեկան հասակից *) մինչև մահը, իբրև զինուորական տուրք, որովհետև քրիստոնեայք ազատ են զինուորագրութիւնից։ Կարճ ասելով, բրիտանական հիւպատոսների միահոգի վկայութեամբ, Թիւրքիայում ամենուրեք քրիստոնեաները պարտաւոր են կառավարութեան վճարել իրանց հողային բոլոր եկամուտների 67%։ Ի հարկէ բացի դրանցից անթիւ անհամար ուրիշ հարստահարութիւններ կան։ Եւ այդպէս թշուառ քրիստոնեաները իրանց ողորմելի կեանքը չէին էլ կարող շարունակել առանց խաբէութեան և կաշառքի։ Իսկ այժմ Անգլիոյ մեծախորհուրդ-բարերար մատենագիրները և սկեպտիկները, որոնք երբէք չեն փորձել իրանց անձի վրայ թէ ինչ է ճնշումն և անարդարութիւն, բարբանջում են մեր առաջ Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների ստրկական բնաւորութեան և ստորութեան մասին։ Իսկ նրանց կրիտիկոսներից քանի՞սը կարող էին դիմանալ տանջանքներին, անպատւութեան, բարբարոսական մահուան յա-

*) Ծնած օրից։

Ծ. Խ.

*) Султанъ и державы. Преподоб. Мальколма Макъ-Колля, каноника въ Рипонѣ. переводъ съ англ. С.-Петерб. 1897.

**) Տես «Արձագանք» № 99.

թիւններին անգիտակցաբար տուրք տուող մենք ենք. ժողովուրդը, որքան գիտեմ, որքան էլ հետեւել եմ աւազակների սխրագործութիւններին, լսել եմ այն, որ աւազակներն հաւատացած են որ եթէ մինչեւ անգամ բռնուին, ճանաչուին, ժողովուրդը ներողամտութեամբ կվերաբերուի. այսինքն սիրտ չի անիլ կառավարութեան յայտնել։

Քանի քանի դէպքեր են եղել և լինում են մեր Զօլաւերում, երբ այդ ժողովուրդը չի կարողացել սիրտ անել աւազակին մատնելու արդարութեան ձեռք։

## ՍԻՕՆԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Պալէստինասէրների շարժումը, որ սկսուել է 15 տարիէ ի վեր և յայտնի է Եւրոպայում սիօնիզմ անունով, հետզհետէ զօրանում է և բազմացնում իւր հետեւողների թիւը թէ Հին և թէ Նոր աշխարհի հրէաների շրջանում։

Այդ շարժման ներկայացուցիչների կօնգրէսը, որ գումարուել էր Զուիցերիայի Բազէլ քաղաքում, փակուեցաւ ամսոյս 19-ին։

Սիօնիզմի գլխաւոր նպատակն է՝ հրէական խնդիրը լուծելու համար միջազգային օրէնքներով ապահովուած մի ապաստան պատրաստել այն հրէաներին պատսպարելու, որոնք չեն կարող և կամ չեն կամենում մնալ իրանց ծննդավայրում. երկրագործական աշխատութեան վերադարձնել հրէական ազգի մեծ մասն իւր պապերի աշխարհում. զարթեցնել հրէական ինքնագիտակցութիւնն և կենդանացնել հրէից լեզուն և գրականութիւնը։

Չնայելով որ նոր շարժումը շատ ներքին և արտաքին խոչընդոտների հանդիպեցաւ, ասում է «Բիրժ. Վեդոմ.» թղթակիցը,—դարձեալ նա ահագին գործ կատարեց։ Պալէստինում այժմ 20 բարեշէն և բարգաւաճ գաղութներ կան 6000 երկրագործ և այգեգործ հրէայ բնակիչներով։ Այդ գաղթականների մշակած բերքերն արդէն սկսել են երեւալ եւրոպական շուկաներում։ Անցեալ տարուայ Բերլինի գիւղատնտեսական ցուցահանդէսում և Կեօլնի և Համբուրգի ջոկ ջոկ հանդէսներում այդ բերքերը մի ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին։

Պալէստինի քաղաքներից և գաւառներից շատերը վայելում են բարեկարգ դպրոցներ, ուր ուսումը գլխաւորապէս հրէից լեզուով է աւանդվում։ Հրէաներն առհասարակ զարկ տուին այդ երկրի վաճառականութեան և արդիւնաբերութեան. այսօր նրանք կրթութեան կարապետ են Պալէստինում։ Սիօնիզմի զարգանալը զարգացրեց և նոր հրէական գրականութիւնը և այժմ հրէից լեզուով հրատարակվում են ամսօրեայ հանդէսներ, օրական թերթեր և բազմաթիւ գրքեր, որոնք թարգմանօրէն մատչելի են անում իրանց ազգին եւրոպական փիլիսոփաների և իմաստասէրների ամենալաւ երկերը։

Սիօնիզմը մի առանձին ոյժ ստացաւ այն րոպէից, երբ նրա կողմն անցան դօկտոր Հերցելի, Մաքս Նորդաուի, Բէնարի, Լազարի, Զանգուիլի, Կենների նման եւրոպական հռչակ վայելող նշանաւոր մարդիկ։ Դոկտոր Հերցելի Judenstadt-հրէից քաղաք—վերնագրով գիրքը, որ գրեթէ ամեն եւրոպական լեզուներով թարգմանուած է, մի նոր դարագլուխ կազմեց սիօնական շարժման մէջ։ Այդ գրքից յետոյ աշխարհիս ամեն կողմերում և համարեա թէ ամեն լեզուներով սկսան թերթեր, հանդէսներ և մանր տետրեր հրատարակուել պալէստինեան գաղափարն արծարծելու համար։ Դրանց մէջ արժանաւոր տեղ է բռնում Բերլին հրատարակուող «Zion» լրագիրը գերմաներէն, ֆրանսերէն և եբրայերէն բաժանմունքներով, և Վիեննայի «Die Welt»—աշխարհ—թերթը, որին աշխատակցում են հրէից ազգի ամենալաւ ուժերը։

«Մեր լրագիրը», ասում է ի միջի այլոց այդ թերթը, «մի հրէական օրգան է, հրէական թերթ է։ Մենք ընդունում ենք այդ նախատական բառն և ուզում ենք դարձնել դրան պատուաբեր բառ։ „Welt"-ը կլինի թշուառների, տկարների, թարմ ուժերի և այն ամեն հրէաների թերթ, որոնք անձնուէր են իրանց ազգին։ Մեր նպատակը գեղեցիկ է և վսեմ. մենք ձգտում ենք խաղաղութեան, հրէական հարցի հաշտ լուծման։ Այս գործն ընդունակ է ոգեւորելու ամեն ազգի ազնիւ անձանց, լինին նրանք քրիստոնեայ, մահմեդական կամ հրէայ. . . Մենք չենք մոռանալ և հրէաների արդի վիճակը։ „Welt"-ը կլինի մեր վահանն և զէնքը, բայց մաքուր և անբիծ զէնքը։ Ուժ դէմ։ Թշնամիների դէմ՝ առանց կրօնի խտրութեան։ Թող չկարծուի, թէ մենք պիտի փառաբանենք ամեն բան, ինչ որ միայն հրէական է. մեզ անհրաժեշտ է մի ազնիւ, լուրջ և արդար ինքնաքննութիւն։ „Welt"-ը կ'աշխատէ փարատել մեր մասին տարածուած թիւր և մոլար կարծիքները։ Այս օրերում, երբ հրէից ազգի հալածանքը նորոգուել է, աշխարհիս մէջ մեծ գործեր են կատարվում։ Բնութեան ուժերը յաղթահարվում են, կուլտուրան և կրթութիւնը անընկճելի հաստատութեամբ յառաջ են գնում։ Ազգերի հաղորդակցութիւնից բարքերը մեղմանում են, և սօցիալական ռէֆօրմների ջերմ փափագը ոգեւորում է ոչ միայն չքաւորներին, այլ և բոլոր ազատամիտ հարուստներին։ Հրէից սիօնական երիտասարդութիւնը, մասնակցելով այս ձգտումներին, չէ աշխատում միայն իւր ազգի համար, այլ ուզում է օգնական լինել նաև ամբողջ մարդկութեան—այդ էլ ահա կ'արտայայտուի մեր լրագրում»։

Նոյն լրագրին խոստացել են աշխատակցել նաև բազմաթիւ քրիստոնեաներ։ Նրա էջերում արդէն տպուած են Գլադստոնի, Բէրթա Սուտնէրի, բարոն Սուտնէրի և այլոց նամակները։

„The Daily News"-ի վերջին համարում կարդում ենք, որ սիօնիստների Բազէլի ժողովում, ուր անդամներ էին եկել Եւրոպայի ամեն երկրներից և Ամերիկայից, վճռել են հիմնել մի կենտրոնական գանձարան և հաւաքել 10,000,000 ֆունտ ստերլին։ Ժողովն ընտրել է մի կոմիտէ, յանձնելով դրան մշակել Երուսաղէմում հիմնուելիք հրէական համալսարանի յատակագիծը և ծրագիրը։ Գալ տարի ժողովը պիտի գումարուի Երուսաղէմում։

Փարիզի „Des Débats"-ի ասելով սիօնիստները յուսով են, թէ սուլթանը մտադիր է հրէաներին վերադարձնել Երուսաղէմ քաղաքը։ Սակայն ինչ օգուտ կարող է ծագել նրանց համար այդ ընծայից հարցնում է թերթը, քանի որ Սուրբ Տեղեաց պաշտպան պետութիւնները թոյլ չեն տալ, որ այդպիսի բան կատարուի։ Ռուսաստանը յամենայն դէպս թոյլ չի տալ։

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Թէ որքան տանջուած է մեր գիւղական հասարակութիւնը գիւղական իշխանութիւնից, թէ որքան դժուար է նրան պրծել այդ իշխանութեան ապօրինի վարմունքների հետ, այդ երեւում է «Նոր. Օբոզր.» Կիլիկլիի թղթակցի մի նամակից որ տպագրուած է յիշեալ լրագրի № 4693-ի մէջ։ Գիւղի տանուտէրին պաշտօնից հեռացրել են և թղթակիցը այդ դէպքը հաղորդում է այնպիսի ոգեւորութեամբ որ կարծես թէ Կիլիկլիի համար մի նոր դարագլուխ է սկսվում։

«Վերջապէս—ասում է թղթակիցը—Կացախի գիւղական հասարակութիւնը ազատ շունչ քաշեց, որովհետև Քութայիսի նահանգապետի կարգադրութեամբ պաշտօնից հրաժարուեց յիշեալ հասարակութեան տանուտէրը։ Տեղական հասարակութեան ուրախութեան չափ չկայ երբ մտածում է, թէ վերջապէս ազատուեց ամբողջ Զօրապանի գաւառում յայտնի հարստահարիչից»։

Բայց կարծում էք թէ հասարակութիւնը ջանքեր չէ արել այդ հարստահարիչից ազատուելու, ո՛չ, արել է.

«Չնայելով որ հասարակութիւնը շատ անգամ է գանգատուել իւր տանուտէրի գործ դրած ճնշումների վրայ, սակայն վերջինս շարունակ պինդ նստած էր իւր տեղը, որովհետեւ նրան հովանաւորում էին գաւառում ոյժ ունեցող անձինք. . . Շատ բողոք բացատրութիւն են տուել տեղական բնակիչները, երբ այդ առթիւ քննութիւն էր կատարում Քութայիսի նահանգապետի առանձին յանձնարարութեանց պաշտօնեան։ Երբ պաշտօնեան հարցրեց թէ «երբ ձեր տանուտէրը այդքան վնասակար է եղել հասարակութեան համար և այդքան չարագործութիւններ է արել, հապա ինչու չէք բողոքել գաւառապետին»։ Գիւղացիք պատասխանել են. «բողոքել ենք, բայց ոչինչ չէ դուրս եկել այդ բողոքներից, բացի այն որ կրկին մեզ էին վնասում այդ բողոքների պատճառով.—մէկին բանտ էին նստեցնում, միւսին մի այլ կերպ էին պատժում և միայն այն պատճառով որ մենք համարձակվում էինք գանգատուել տանուտէրի դէմ»։

Եւ այդ միայն Կիլիկլիում չէ, այլ ամենուրեք, բայց ի հարկէ ուրախալի է որ կառավարութիւնն արդէն սկսել է այդ չարիքի վրայ ուշադրութիւն դարձնել։

*** Դրանից աւելի վատ երեւոյթներ են պատահում ուրիշ գաւառներում, ուր այսպէս անուանուած «փողրաթչիները»՝ միացած գիւղական տանուտէրերի հետ՝ հարստահարում են գիւղական ժողովրդին։ Նոյն լրագրի մէջ կարդում ենք Սաչխերից գրուած հետեւեալ տեղեկութիւնը՝

«Սաչխերի շրջանի գիւղական հասարակութիւնը «փողրաթչիներին» բաւական մեծ գումար է վճարում, որպէս զի վերջիններս կառավարչական յանձնարարութիւններով շրջող պաշտօնեաների համար անհրաժեշտ թուով ձիեր պահեն։ Փողրաթչիները փոխանակ պայմանաւորուած թուի պահում են 5-6 կիսամեռ ձիեր և այն էլ այդ ձիերից օգտվում են ոչ թէ պաշտօնեաները, այլ այդ փողրաթչիների ազգականները և ծանօթները. իսկ պաշտօնեաներ եկած ժամանակ առնում են գիւղացիների ձիերը, որ սովոր խլում են առաջին պատահող գիւղացուց։ Այս տողեր գրողը վկայ է եղել թէ ինչպէս անցեալ ամսի 27-ին Սաչխերում գիւղի տանուտէրը բռնեց այն գիւղացիներին, որոնք արմտեղէններ էին բերել իրանց ձիերով վաճառելու, և խլելով ձիերը տուաւ նրանց երկրաչափին մի ամբողջ շաբաթով։ Երբ գիւղացիք յայտնեցին թէ իրանք այդ նպատակով դրամ են վճարում, ուստի և պարտաւոր չեն ձիեր տալ, ոչ ոք նրանց բողոքին ուշ չդարձրեց»։

Բանն այն է որ, ինչպէս հաղորդում է նոյն թղթակիցը այդ տեղական փողրաթչիներից մէկն էլ տեղական ոստիկանական պաշտօնեան է։

*** «Մշակի» Բուքրէշի թղթակիցը հաղորդում է (№ 101) այն խօսակցութիւնը, որ Թուրքաց արտաքին գործերի նախարարութեան առաջին քարտուղար հայազգի Նուրեան էֆէնդին ունեցել է «Freie Presse»-ի թղթակցի հետ։ «Courage d'opinion» ասուածն անհրաժեշտ յատկութիւն է, որ պիտի ունենայ ամեն մի գործիչ և պաշտօնեայ և մանաւանդ քաղաքական պաշտօնեայ։ Այդ կարծիք յայտարարելու քաջութիւնը ունեցող է ձևանում, կամ գուցէ և ունի Նուրեան էֆէնդին, որ արդէն հռչակուած է իբրև թուրքամոլ, ուստի շատ հետաքրքրական են նրա յայտնած կարծիքները և այն էլ յայտնած մի տարածուած լրագրի թղթակցի։ [illegible], որ Նուրեան էֆէնդին գիտէր որ իւր կարծիքները հարցնում են հրատարակելու համար և ինքը պատասխանատու է իւր ամեն մի խօսքին։ Ահա այդ իմանալով հանդերձ, Նուրեան էֆէնդին՝ ի միջի այլոց ասել է հետեւեալը, որ մենք առաջ ենք բերում անփոփոխ արտատպելով «Մշակից» և թողնելով նրա պատասխանատուութիւնը խօսքերի հեղինակի և նրա հրատարակող լրագրի վրայ։

«Ձեզ յայտնի է, պարոն, որ Բերլինի կօնգրէսի մէջ անգլիական դիպլօմատիայի ձեռքով 61-ը յօդուածը մտցնելուց առաջ՝ չը կար հայոց հարց։ Հայաստանը մի երկիր էր, որ միմիայն պատմական հետաքրքրութիւն էր ներկայացնում եւրոպական ազգերի համար։ Սկսած այն ժամանակից, երբ Բիւզանդիան անցաւ թիւրքերի ձեռքը՝ ապրում էր հայը կատարեալ խաղաղութեան և ապահովութեան մէջ, հայերի թիւը աստիճանաբար մեծանում էր, հարստութիւնները աճում էին, կրօնը մնում էր անբռնաբարելի։ Բոլոր օտարերկրացի ճանապարհորդները վկայում են, որ ամբողջ Անատօլիայում առեւտուրը և արդիւնաբերութիւնը ոչ-մահմեդականների ձեռքումն են, որ ամենաբերրի անկիւնները և ամենածաղկած քաղաքները պատկանում են քրիստոնեաներին։ Իսկ դրա պատճառն այն է, որ մուսուլմանը, իր տունն ու այգին թողած՝ հինգ տարով զինուոր է գնում, մինչդեռ հայը նոյն ժամանակամիջոցում տանը մնալով՝ հարստացնում է իրան։ Հարկերի բանակութիւնը նոյնն է երկուսի համար, այն տարբերութեամբ միայն, որ թուրքը հինգ տարի կորցնելով, չէ կարողանում իր տուրքը վճարել, այն ինչ հայը այնքան է շահում, որ համ տուրքն է վճարում, համ էլ ապրում է առատութեան մէջ։ Սակայն, արի տես որ հայերը դարձեալ հակապետական մտքեր են քարոզում։ Դրա պատճառն էլ պարզ է։ Ուշք դարձրէք. հայ ագիտատօրների գլխաւորներից ոչ մէկը 40 տարին չէ անցրած։ Եւ եթէ մօտ ծանօթանաք՝ կը տեսնէք, որ դրանք կազմում են այն այլասերուած տարրը, որը ծնունդ է Փոքր-Ասիայի մէջ ամենուրեք տարածուած ամերիկական դպրոցների։ Դրանք են, որ սերմանում են իրանց սաների գլխում այն մտքերը, որոնց ներկայացուցիչն է այսօր երիտասարդ Հայաստանը,—ազատութեան, հաւասարութեան մտքեր, որոնք մինչեւ իսկ ամենաքաղաքակիրթ Հիւսիսային Ամերիկայում չեն իրագործվում։ Երիտասարդ Արթինը,—որ և է գեղջուկի տղայ,—ընկնում է այդ ահագին հիմնարկութիւններից մէկի մէջ Մարաշում կամ Բիթլիսում, Էրզրումում կամ թէ Վանում—և ահա այդտեղ ձեռք է բերում այն յատկութիւնները, որոնք, իր կարծիքով, անհրաժեշտ են ապագայ ազատ հայրենիքի պարլամենտի անդամ լինելու համար։ Իսկ իր միջավայրում, իբրև քաղաքացի նա բոլորովին անպէտք է, այլասերուած, déclassé։ Հրաժարվում է իր ծնողներից, որոնց ներկայութիւնը ճնշում է իրան, հրաժարվում է արուեստից, գլխի մէջ քաոս է։ Գտնում է իր նմաններին, կազմում են գաղտնի ժողովներ, բերել են տալիս անիշխանական թերթեր, փառաբանում են սարսափն ու սպանութիւնը, կրակն ու թոյնը... Եւ այդ կատաղած ֆանատիկոսները տարածում են նոյն մտքերը ազգի ամբոխի մէջ. հետեւութեամբ վառում են ապստամբութեան կրակը և աւերում հասարակաց անդորրութիւնը։ Արտասահմանեան կոմիտէներից առատ նպաստներ են ստանում՝ իրանց դժոխային մտքերն իրագործելու համար։ Օրէնք չկայ դրանց համար, կարդացէք դրանց անիշխանական թերթերը, անիշխանական գաղափարներից զատ՝ ոչինչ։ Ոչ մի խօսք կարգապահութեան, ոչ մի խրհուրդ արդարութեան, մարդասիրութեան, եղբայրութեան։ Երազում են նը-

---

նոյն հաւատի, սկզբունքի, իդէալի։ Սակայն Թիւրքիայի քրիստոնեաներն այդ արել են ամբողջ դարերի ընթացքում։ Լօրդ Րօսսէլի յիշողութեանց մէջ գեղեցիկ տեղ կայ, որ ես առաջ եմ բերել քանի տարի առաջ և որ արժէ կրկին առաջ բերել այստեղ.

«Մեզ շարունակ հարցնում են թէ արդեօք ազատ լինելու ընդունակ են այն ազգերը, որոնք այժմ հրատարակում են իրանց անկախութիւնը և բաժանում են իրանց հաստատութիւնները։ Եւ իսկապէս, սոսկալի երեւոյթ կլինէր եթէ այդ պատճառաբանութիւնը յաղթող հանդիսանար և արգելք լինէր բռնութեան տակ գտնուած երկիրներին ձգտել դէպ ազատութիւն։ Այո, մարդկութիւնը յուսահատութեան մէջ կընկնէր, եթէ այդպիսով բարբարոսութեան իրաւունքը համարուէր իր անարդարութիւնից օգուտ քաղել և իւր գործած յանցանքները բերել իբրև իւր իրաւանց ապացոյց։ Արդարութեան բացարձակ աղաւաղումն կլինէր, եթէ բարբարոս կառավարութեանց իրաւունք տրուէր ասելու.—տեսէք, թէ որքան ստախօս, կեղծ, ստոր և խաւարամիտ է դարձել այդ ազգը մեր իշխանութեան տակ. ուրեմն և մենք իրաւունք ունինք նրան պահել յաւիտենական անել զրկութեան և ստրկութեան մէջ»... Բայց ոչ։ Երբ ինձ հարցնում են թէ կարող է այս կամ այն ազգն ազատ լինել, ես պատասխանում եմ դրան հետեւեալ հարցումով... վայե՞լ է արդեօք որևէ մարդու լինել բռնակալ։ Պատասխանը պիտի լինի հետեւեալը.—ոչ մի մարդու վայել չէ, ով որ էլ լինի նա, մահմեդական թէ քրիստոնեայ, Յունաստանում թէ Կոլումբիայում։ Ապացուցուած է որ միշտ, ուր միայն յայտնվում է բարբարոսութեան սոսկալի տիրապետութիւնը, նա ստեղծում է վրդովմունքներ և դժգոհութիւններ, որ նոյն իսկ ինքն այդ բռնակալութիւնը կեղծաւորութեամբ ողբում է։ Եւ նրանք, որոնք առաջինն են շղթում շղթաները, թէև իրանց մարմնի վրայ կրում են ըստրկացուցիչ օղակների հետքերը, սակայն այդ հետքերը կըջնջուին և երբ կանցնի ազատուած ստրուկի առաջին կատաղութիւնը, ստրուկի վրէժը տեղի կըտայ ազատ մարդու առաքինութեան առաջ»։

Ինձ երբեմն անուանել են ֆանատիկոս իսլամականութեան վերաբերմամբ։ Ես ֆանատիկոս չեմ ոչ այդ և ոչ մի այլ հարցում։ Ես պաշտպան եմ կրօնական ազատութեան, այդ խօսքի ամենալայն մտքով, ինչպէս պահանջում են մարդկութեան անկապտելի իրաւունքները։ Իմ կրօնական համբերատարութիւնն կանգ է առնում այնտեղ, ուր մի մարդու կրօնական վարդապետութիւնները եղեռնագործ ազդեցութիւն է գործում մի ուրիշ մարդու բնատուր իրաւունքների վրայ, ինչպէս որ այդ լինում և միշտ եղել է այն բոլոր պետութեանց մէջ, ուր տիրում է իսլամի ռէժիմը։

Ինձ ամենևին չէ գոհացնում այն, երբ մատնացոյց են անում սուլթանի պալատում բարձր պաշտօնեաներ ունեցող քրիստոնեաների վրայ, սուլթանի, որ ստիպուած է օգտուել նրանց ծառայութիւնից, բաւական թուով գործունեայ մահմեդականներ չ'ունենալուն պատճառով, կամ թէ՝ որովհետև քաղաքական կողմից իր համար աւելի ձեռնտու է գտնում ընդունել նրանց պաշտօնի։ Ռուսիայում ճորտութիւն եղած ժամանակ, շատ անգամ էր պատահում որ կալուածատէրն իւր ճորտերից մէկին կրթութիւն էր տալիս և նրան իւր կալուածների կառավարիչ էր նշանակում, կամ թոյլ էր տալիս նրան կեանքի մէջ իւր համար մի արհեստ, մի կարիեր ընտրել. բայց այդ ամենևին չէր փոխում ճորտերի դրութիւնն ընդհանրապէս և չէր փոխում նոյն իսկ միակ արտօնուած ստրուկի վիճակը. մինչև որ նրան չշնորհուէց իսկական ազատութիւնը։ Այդպէս է և Թիւրքիայում։ Շատ հազուագիւտ բացառութիւնները միայն ապացուցանում են թէ ամբողջ ժողովուրդը ենթակայ է բարբարոսական ճնշման կանոնին. նոյն իսկ շատ քչերի բացառիկ իրաւունքներն ևս ամենայն վայրկեան կարող են խլուել նրանցից։ Նրանք իրաւունքներ չունին։ Սուլթանի այժմեան դեսպանը Լօնդօնում, իւր երկու նախորդների պէս, քրիստոնեայ է, բայց նա ոսմանեան պետութեան քաղաքացի չէ և չէ էլ կարող լինել, որովհետև դէպի այդ քաղաքացիութիւնը տանող միակ դուռը—իսլամը դաւանելն է։ Թուրքաց դեսպանը թէև յոյն է և քրիստոնեայ, բայց ոչ այլ ինչ է և ոչ աւելի քան հասարակ րայա, որ արժանացել է բարձր պաշտօնի սուլթանի կամայականութեան շնորհիւ, իսկ և իսկ ինչպէս ամերիկական ագարակատէրի ստրուկ, որին իւր տէրը միւսների վրայ մեծ է նշանակել և այս փաստը ամենևին չէ ապացուցանում թէ Թիւրքիայում ոչ-մահմեդականը օրինական գիրքի մէջ է։

Իսկապէս րայայի դրութիւնը Թիւրքիայում աւելի վատթար է քան ստրուկի դրութիւն ամերիկական ագարակում կամ հռովմէական պետութեան մէջ, որովհետև ամերիկեան ագարակատէրը կամ հռովմայեցի ստրկատէրը կարող էին—և երբեմն անում էին—ազատութիւն տալ իրանց ստրուկներին, բայց նոյն իսկ սուլթանը չէ կարող ազատ մարդ դարձնել և ոչ մի րայայի իւր պետութեան մէջ, որովհետև ազատութիւնը բացառապէս մահմեդականների արտօնութիւնն է։

Որովհետև մեր (անգլիական) քաղաքական գործիչները և դեսպանները անգիտակ էին (?!) այս էական փաստին, ուստի նրանց քաղաքականութիւնը Թիւրքիայում սկսած լօրդ Ստրատֆօրդից մինչև Րէդկլիֆը և վերջացրած նորագոյններով—այդքան անարժան էր և կոյր տարբեր։ Ես աշխատել եմ ապացուցանել այդ ճշմարտութիւնը երկար տարիների ընթացքում և մեզանից մի քանիսը վերջապէս սկսել են խոստովանել ճշմարտութիւնը։ Հաճելի էր կարդալ «Morning Post"-ի մէջ անցեալ սեպտեմբերի 17-ից մի առաջնորդող յօդուած, որ պարզօրէն ներկայացնում է իրերի վիճակը, ինչպէս այդ երեւում է հետեւեալ քաղուածքից.

«Ճիշտ այնպէս, ինչպէս քրիստոնեայ արեւմուտքում, կենդանի արարածները բաժանվում են մարդկանց և անմիտ անասնոց դասակարգերի, նոյնպէս և այնտեղ, ուր տիրապետում է մահմեդական ռէժիմը, նրանք բաժանվում են ուղղափառների և անուղղափառների և անուղղափառ անուանուած մարդկային արարածների վրայ նայում են գրեթէ նոյնպէս, ինչպէս անասնոց վրայ։ Եւ ճիշտ այնպէս, ինչպէս երբ քրիստոնեայ պետութեան մէջ եղջիւրաւոր անասունների ժանտախտ երեւալու դէպքում նրանց կոտորում են հօտերով, նոյնպէս և Թիւրքիայում, ամեն անգամ երբ քրիստոնեաները վտանգաւոր են համարել, արդարութեամբ կոտորել են նրանց։ Մահմեդական աշխարհում անհնարին է գիտել մարդկայնութեան սկզբունքին, որովհետև այդ կընշանակէր ընդունել մարդկանց եղբայրութիւնը, բայց այդ չէ ընդունում մահմեդական կրօնի էութիւնը։ Մահմեդական կառավարութեան մէջ քրիստոնեան չէ կարող ունենալ բաժին, դա կլինի ուրացումն մահմեդականութեան։

Այս ամենից յետոյ դօկտոր Մակ-Քօլ անցնում է այն անոտի երկիւղին, որ տիրում է Անգլիայում և ուրիշ տեղերում սուլթանի խալիֆութեան վերաբերմամբ։ Թիւրքիային ջնջելու, կամ նրա վրայ ճնշումն գործելուն աւելի եղող իբր ամենամեծ [illegible] անուանում են նրա խալիֆայական իրաւունքը և հեղինակութիւնը, որով սուլթան իբր թէ կարող է ոտքի կանգնեցնել ամբողջ մահմեդական աշխարհը քրիստոնեայ աշխարհի դէմ։ Դօկտոր Մակ-Քօլ երկար բարակ սկսում է ապացուցանել թէ սուլթանը խալիֆ չէ, թէ մահմեդական աղանդները բազմաթիւ են այլն այլն։ Բայց մեզ թվում է որ այդ հարցով զբաղուելը կատարելապէս ջուր ծեծել է։ Բաւական է յիշել միայն 1876—77 թ. ռուս թրքական պատերազմը, երբ այդ «խալիֆը» նոյն ընկած և տեսնելով ռուս զօրքերին իւր պալատի դրան առաջ պատրաստ էր ոչ միայն բոլոր մահմեդականներին ի զէն հրաւիրել, այլ և Մուհամեդի դրօշակի հրեշտակներին և դժոխքի սատանաներին, և ոչինչ էլ չկարողացաւ անել, որովհետև ոյժով և սրով ապրող մահմեդականութիւնն ընկճվում է աւելի մեծ և աւելի բարոյական ոյժի առաջ։ Կրկնում ենք, որ եթէ սուլթանի խալիֆութիւնը նշանակութիւն ունենար և եթէ նա գրգիռ կարողանար առաջացնել, այդ կանէր 1876 թուականին, բայց մահմեդական աշխարհը հանգիստ էր և դողում էր, այլ սուլթանին օգնութեան հասան իրանց կողերի վրայ խաչ կրող անգլիական զրահակիրները...

Խալիֆութիւնը և մահմեդական ընդհանուր գրգիռը ցնորք է և նա մի օրում յօդս կցնդի եւրոպական առաջին թնդանօթը տրաքելուց յետոյ, ուստի մենք այդ մասին թողնում ենք և աւելորդ ենք համարում առաջ բերել արժ. հեղինակի պատճառաբանութիւնը։ Միայն մեզ համար անհասկանալի է մնում այն կրօնական համբերատարութիւնը մահմեդականութեան վերաբերմամբ, որով պարծենում է ինքը դօկտոր Մակ-Քօլը և կարծիք թէ ուրիշներին ևս ցանկանում է ներշնչել այդ համբերատարութիւնը։ Թող ներելի լինի մեզ յայտնել մեր կարծիքը, որ այդ երկչոտ համբերատարութիւնը կեղծիք է և դժբախտաբար ընդհանրացած կեղծիք ու կատարելապէս կործանարար քրիստոնէական անսահման ազատութեան իդէալի համար։

Այդ ինչպէս է որ Անգլիայի միսիոնարները ամենայն եռանդով ջանքեր են գործ դնում քրիստոնէութիւն տարածել քրիստոնեաների մէջ, իսկ «համբերատար» են դէպի մահմեդականութիւնը։ Եղել է արդեօք մի որևէ ջանք Թիւրքիայի վրայ ազդելու՝ նրա մահմեդական տարրի մէջ տարածելով քրիստոնէական ճշմարտութեան սկզբունքները։ Չէ՞ որ սա էական և ամենաէական խնդիր է։ Բայց այստեղ մենք միայն ի դէպ յիշեցինք և այդ մասին կխօսենք ուրիշ անգամ անկախ ներկայ գրուածքից։

Մահմեդական ռէժիմի էութիւնը պարզելուց յետոյ դօքտոր Մակ-Քօլ կըրկնում է իւր նոյն սկզբունքը թէ Թիւրքիայի վրայ կարելի է ազդել միայն բանի ոյժով։

Ս. Հախումեան։

(Կշարունակուի)։

րանք մի ազատ հայրենիք, ազատ ամեն տուրքից, ուր չկայ կարիք, չկայ աշխատանք, ուր հարուստն իր քրտնքով վաստակած հարստութիւնը պիտի բաժանէ աղքատների հետ և այլն և այլն։

*** «Կեղծաւոր, զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո և զգերան ի քում ական ոչ տեսանես»։ Ո՞րքան վաղուց է ասուած Աստուածային գրքի մէջ այդ դառն ճշմարտութիւնը։ Բայց մինչև այժմ աշխարհ, որոնց մէջ չարունակ գերաններ կան կարող են կարդալ այդ ճշմարտութիւնը, ոչ, նրանք միշտ զուրկ կմնան այդ բարձր հոգեկան գուարճութիւնից։ Մամուլի բարքերի տեսակէտից մի հետաքրքրական վէճ է ծագել «Մշակի» և Վարնայում հրատարակուող «Հայկի» գաւիշտական (?) թերթի մէջ (խեղճ «Մշակ», այժմ բանդ գաւիշտական թերթերի հետ է)։ «Մշակի» մէջ երեք ամսից առաջ գրութեամբ մի թղթակցութիւն է երևացել Վարնայից, այդ թղթակցութեան մէջ զանազան անպատշաճ ակնարկութիւններ է եղել Բուլղարիոյ հայ մամուլի վրայ։ Այդ բանից շատ վիրաւորուել է «Հայկի» անխմբագրութիւնը և ուրիշ գէնք չէ գտել «Մշակի» դէմ մրցելու, եթէ ոչ կիսով չափ բանալ նրա թղթակցի խօսքերի անունը և զանազան կասկածելի ծամածռութիւններով ապացուցել թէ գեռ բոլորովին պիտի բանայ թղթակցի անունը։ Թէև ասուած է որ «խելօք մարդը ոչ միայն յիմարութիւններ չպիտի խօսի, այլև չպիտի լսի», այնուամենայնիւ հարկ ենք համարում առաջ բերել «Հայկի» այդ գլուխի բարբանջանքները իբրև մի նմուշ այն ընդհանուր գաղափարի, որով լիքն է հայոց խեղճ մամուլի ասպարէզը չարամտութեան սահմանից դուրս գլուխը։ Ահա այդ նմուշը.

Բացնամակ

Առ Տեար Մ... Ա...արնեցի, այժմ Ռուսճուգցի և Նամակագիր «Մշակի»։

«Երեք ամսից աւելի է արդէն, որ ձեր թղթակցութեան մէջ ... Բուլղարիոյ հայ մամուլի մասին ... Գիտէք մեզի ձեր ով ըլլալը հասկնալ, ուստի Բամաժիկը հրեղէն սուրհանդակով անմիջապէս ի Կովկաս «Մշակի» ազարան զրկեցինք, ուր վերադարձած (?) երեք ամսուայ ... տակէն ձեր անունը երևան հանեց»։

«Անշուշտ կը զարմանաք, Պարոն, մեր այս յաջողութեան վրայ, պէտք է համոզուիք որ եթէ մինչև իսկ Սիպերիոյ սառնամանեաց տակ ծածկուելով հրատարակէիք ձեր հայհոյանքը՝ ամրակէլ Բամաժիկի ձեռքէն զարձնալ չէի կրնար ազատել ձեզ, ուստի ընկերացէք մեզի հետ ծափահարել Բամաժիկի ձեր վրայ յաղթանակը։

«Որովհետև դուք ձեր նոյն գրութիւնը մերթ թրքահայերէն և մերթ ռուսահայերէնով գրած էք, ուստի պատասխանում ենք որ կեանքերնուդ մէջ գլմբերնին չի տեսած ու հեռուներն չի լսած անձնաւորութիւններ նախատելովնիդ ձեր մասին մի արարած լինելն ապացուցանում էք։ Ուրեմն ի դիմաց Բուլղարական հայ մամուլի՝ առաջարկում ենք ձեզ հրապարակաւ ներումն խնդրել նոցանից, ապա թէ ոչ պիտի յանձնենք զձեզ Բամաժիկի, որպէս զի կենդանագիրդ ցոյց տայ Հայկի միջոցով։ Փաթթուռի ճամբայ չունիք։ Եթէ համաձայնիք մեր առաջարկին՝ կառնի փոքրիկ յայտարարութիւնից մի կտոր նուիրում ենք ձեզ, ապա թէ ոչ՝ կենդանագիրնիդ, հանդերձ Բամաժիկեան կոնդակաւ»։

«Մշակը» այդ տողերի առթիւ ամենայն իրաւամբ նկատում է թէ

Կարծէք այդ տողերը՝ ոչ թէ մի լրագրի մէջ են տպված, այլ թուրքաց մի լրտեսի գաղտնի զեկուցագրի մէջ։ Փոխանակ քննադատելու թղթակցի գրածը, «Հայկի» լրագիրը, լրտեսի յատուկ ձևերով, զբաղված է այն հարցով թէ ով է երեք ասողի տակ ծածկված մարդը... Ուրեմն ինչպէս կարելի է պատասխանել այդ անազնիւ թերթին...

Շատ և շատ ճշմարիտ է, իսկ և իսկ կարծէք թէ գաղտնի լրտեսի զեկուցագիր է։

Բայց կարդացէք «Մշակի» նոյն № 101 մէջ Երևանի թղթակցութեան մէջ հետևեալ տողերը.

«Այս շաբաթ Վեհափառ Կաթողիկոսը մեզ մօտ էր (?)։ Մուտք գործեց (?) Երևան այնպէս (?) որ ոչ ոք չիմացաւ (!!), մեկնեց Երևանից նոյնպէս»։

Այդ բաւական չէ, դեռ էլի աւելացնում է

«Էջմիածնից գալիս էլ, Էջմիածնեցիք չեն իմացել։ Բայց թէ ինչի՞ համար էր եկել՝ այդ էլ չկարողացանք իմանալ (?)»։ («Մշակ № 101 1897 օգոստոս 30, երես III. սիւնակ 2-րդ և 3-րդ)

Այժ, «կարծէք թէ այդ տողերը— խօսելով «Մշակի» լեզուով—ոչ թէ մի լրագրի մէջ են տպուած, այլ մի լրտեսի գաղտնի զեկուցագրի մէջ։

Հետաքրքրական է թէ արդեօք «Միրօլիյէ Օսզօլսկի» Երևանի թղթակիցը ևս այդ տեղեկութիւնը կըհաղորդի իր լրագրին թէ ոչ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԵՏԷ. — Կրետէում տեղի ունեցաւ ընդհարումն զինուորների և ապստամբների մէջ։ Հաւասի ընկերհեռագիրը Կանդիայից հաղորդում է, որ ապստամբները հրացանաձիգ են եղած տաճիկ զօրքերի վերայ, որ նոյն եղանակով պատասխանած է։ Որբան յայտնի է, ոչ որ սպանուած չէ։ Միայն խռովութիւնը, որ ապստամբները ներում են իրանց հրացան արձակելու տաճիկ զօրքերի վերայ, շնայելով եւրոպական զօրքերի և նաւատորմղի ներկայութեան, ցոյց է տալիս իրերի վիճակի անբաւարար լինելը կղզում։ Ջեվադ-փաշայի նահանգապետ նշանակուելուց յետ, ամենքը յոյս էին տածում, որ նրան կյաջողի կղզու վրայ խաղաղութիւն և կարգ վերականգնել։ Նրան ճարպիկ և հմուտ կառավարիչ էին համարում աչքի առաջ ունենալով նրա նախկին գործունէութիւնը Կրետէում։ Բայց այժմ նա անընդունակ երևեցաւ դրա համար։ Նրա ներկայ գործողութեանց եղանակը միայն մահմեդականներին առիթ է տալիս գոռոզութեամբ բարձրից նայելու քրիստոնեայ բնակիչների վրայ, որով գրգռվում են վերջինները։

Ջեվադ-փաշայի վերաբերութիւնը դէպի ծովակալները չէ կարող բարեմտական համարուել։ Փոխանակ երկու կողմերն էլ միասին գործելու կղզին անդորրացնելու համար, իւրաքանչիւր կողմը գործում է անկախօրէն։ Մէկի կարգադրութիւնները ջլատում են միւսի կարգադրութիւններով, այնպէս որ ոչ մէկի գործունէութիւնը նպատակին չէ հասնում։ Պարզ է, որ ապահովութիւնն և օրինականութիւնը չեն կարող հաստատուել Կրետէում, մինչև խաղաղութեան դաշնագիրը Յունաստանի և Տաճկաստանի մէջ չստորագրուի։

— Ինչպէս երևում է, յարաբերութիւնը տաճիկ նահանգապետ Ջեվատ-փաշայի և եւրոպական ծովակալների մէջ աւելի և աւելի սուր կերպարանք է ստանում։ „Standard“-ի ասելով անգլիական ծովակալը ներկայ չէ եղել այն հացկերոյթին, որ—Ջեվատ փաշան տուել է ծովակալներին, հիւպատոսներին, սպաներին և տաճիկ իշխանութեանց։

„Int. Korr.“ լրագրի Աթէնքից ստացած հեռագրի հաղորդածին նայելով, ծովակալների կազմած ժամանակաւոր զինուորական ատեանը քաղաքական յանցաւորների համար, շնայելով տաճիկ նահանգապետի բողոքին, արդէն սկսել է իր գործունէութիւնն և այս օրերս պէտք է քննէ երկու մահմեդականների և մի քրիստոնեայի գործերը։ Բացի սրանից ծովակալները Դրեփանօ փարոսում նշանակել են եւրոպացի պահապաններ, որի համար հարկ եղաւ բուռն ոյժ գործ դնել տաճիկ զինուորներին հեռացնելու համար այնտեղից։ Վերջապէս ծովակալ Կանեվարօն Հերիսէնի տաճիկ զինուորական կառավարիչ Իսմայիլ բէյին ուղղեց խիստ պահանջ, որ նա միջոցներ ձեռք առնու քրիստոնէական եկեղեցիների և քրիստոնէական աստուածպաշտութեան ապահովութեան համար։

Ծովակալների գործողութեանց հաստատամիտ եղանակը զգօնութեան առիթ է տուել մահմեդականներին և ծովեզերեայ քաղաքների մահմեդական բնակիչները թշնամական ցոյց են անում եւրոպացիների դէմ։ Այս առթիւ ծովակալ Կանեվարօն յայտնեց Ջեվատ-փաշային, որ եթէ որևէ նշանաւոր ցոյց կատարուի մահմեդականների կողմից, ինքը կհրամայէ անյապաղ զինաթափ անել ոչ միայն բոլոր մահմեդականներին այլև տաճիկ զօրքերն էլ։

## ՋԱՆԱՋԱՆ

Ջատախօս սափրիչը հարցրաւ իր մուշտարուն.

—Ինչպէս կուզէք որ ձեր մազերը խուզեմ։

—Առանց մի բառ խօսելու, պատասխանեց մուշտարին։

Գիւղական եկեղեցիների մէջ սովորաբար մարդիկ ու կանայք ջոկ-ջոկ են կանգնում։ Տէրտէրը լսեց, որ աղօթքի միջոցին շշնջոց կայ, երկու խօսքով նկատողութիւն արաւ։ Մի կին բարձրաձայն պատասխանեց.

—Տէր հայր, խնդրեմ ապահով կենաք, խօսողը կանանց դասից չէ։

—Աւելի լաւ, օրհնեալ, շշնջոց շուտ կըդադարի։

Ուսուցիչը. —Խնձոր քաղելու ամենայարմար միջոցը ո՞րն է։

Աշակերտը. —Երբ պարտիզպանը հեռացած է և շունը պարտիզում չի երևում։

Մի մարդ սովորութիւն ունէր, ամեն օր ձի էր հեծնում և սիրով՝ իւր կաթն էր գործածում։ Բարեկամը մի օր հարցրաւ—ինչպէս ես անում, որ այդպէս առողջ ես, ո՞վ է բժիշկը։

Մարդը պատասխանեց.

—Բժիշկս մի ձի է, իսկ դեղավաճառս մի էշ։

Ելեքտրական քերծը (երկանիւ կառք) Լոնդոնում։ Մի անգլիական ընկերութիւն Լոնդոնում համարձակ և հետաքրքրական փորձ արաւ։ Այս օրերս նա հանդէս բերեց և սկսաւ գործադրել ինքնաշարժ ելեքտրական քեբեր։ Այս նորատեսակ կառքը մեծ ընդունելութիւն գտաւ։ Սոյն նորաձև քէբերն, որոնց անիւները կաուչուկով պատած են, քիչ աղմուկ է հանում և ծախսն ելեքտրականութեան վրայ ձի կերակրելու ծախքից պակաս է։ Ընկերութիւնը պատրաստել է էլի 100 այդպիսի քեբեր, և ձիով վարուող քեբերի ալերն, որոնք սկզբում ծիծաղում էին իրանց ախոյանների վրայ, այժմ շատ անհանգիստ վիճակի մէջ են։

Աղատիչ - շուն. —Ամերիկական լրագրները հետևեալ դէպքն են հաղորդում Էլլրէդ քաղաքում (Պենսիլվանիա) մի հիւրանոցատէր ունէր նիւֆաունդլէնդի մի շուն։ Մի գիշեր հիւրանոցում հրդեհ պատահեցաւ Դոնապանը, ըստ սովորութեան, հարբած էր։ Ջունն առանձին համակրութիւն ունէր դէպի այդ հարբածը, աշխատում էր հաջոցով զարթնեցնել նրան, ապա բարձրացնելով նրան զգուշութեամբ դուրս տարաւ փողոց։ Սրանով չվերջացաւ գործը։ Չորքոտանի հերոսը վերադարձաւ հիւրանոց և բարձրաձայն և յուսահատական հաջոցով զարթեցրեց հիւրանոցի բոլոր բնակիչներին, որոնք այսպէս միջոց ունեցան ազատուելու։ Մի կին դուրս փախչելիս, ձեռքից վայր ձգեց իւր երեխային, շունը ընկնում է երեխայի վրայ, բռնում նրա շապկից ատամներով և նրան տանում է անվնաս ու առողջ գրեթէ խելագարուած մօրը։ Ապա ազնիւ անբանը կրկին վերադառնում է վառուող հիւրանոցը նորանոր սխրագործութեանց համար։ Բայց լողճուկ նիւֆաունդլէնդցին այլևս չերևեցաւ, նա զոհ եղաւ իւր հաւատարմութեան դէպի մարդիկ, որոնք զուցէ շատ անգամ նրան նեղացրել էին և ծեծել։

Ժամանակաւոր խմբագիր՝
Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը

Թիֆլիզից՝ — հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 8 ժամին (գիշերելով Մլեթ կայարանում) և 10 ժամին (գիշերելով Պասանաուր կայարանում) և հասնում են Վլադիկավկազ միւս օրը, երեկոյեան 7 ժամին և 9 ժամին 10 րոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբուսները Թիֆլիզից դուրս են գնում առաւօտեան 7 ժամին և 3 ժամին կէսօրից յետոյ և առանց գիշերելու ճանապարհին հասնում են Վլադիկավկազ միւս օրը առաւօտեան 9 ժամին և երեկոյեան 5 ժամին 20 րոպէին։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 7 ժամին (գիշերելով Մլէթ կայարանում) և 9 ժամին Դուշէթում) հասնում են Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 7 ժամ 25 րոպ. և 8 ժամ 15 րոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբուսները Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 8 ժամին և երեկոյեան 7 ժամին և հասնում են Թիֆլիզ միւս օրը առաւօտեան 8 ժամին 15 րոպէին և երեկոյեան 8 ժամին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Դուկիս, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԳԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝
Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Միջական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՕԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՉԵՆԿՕՅԻ)

Սօլօլակ, Գանովսկայա փողոց № 3, Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՕԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ԶՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը $12^1/_2$—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը $12^1/_2$—$1^1/_2$. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին-բժիշկ ՆԱ. Կ. ԿԱՐՊՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը $12^1/_2$—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԴԼԷՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բաժանմունքում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, միջական մահճակալի, ելեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱԿ. ԽԱՉ. ՔՈՉԱՐԵԱՆՑԸ,

որ ունի Ուսումնարան Պանսիոն և աշակերտական բնակարան, և վարժ. օր. Սոփ. Խաչ. Քոչարեանցը ընդունում են աշակերտ-աշակերտուհիներ և պատրաստում են առարկաներից և օտար լեզուներից։

Միքայէլեան փողոցով, Բէլուտովսկայա փ. տ. № 33 Նիկողայոսեանի։ (3—2)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ընդունում է իւր վրայ աղբի փոսերը մաքրելու աշխատանքները, պնէվմատիքական ջրհանով, որ վարչութիւն ունի գաղերի հոտը ոչնչացնելու համար։ Պատուէրներ տուողները պէտք է դիմեն քաղաքային վարչութեան շինութեանց բաժինը։ Գների մասին առանձին համաձայնութիւն կըկայացնուի։ (3-3)

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է «Պետ. գրավաճառան.»

Վ. Փափազեանի Աղահը . . 15 կ.

Նոյն հեղինակի Տուրխափ յիշատակարանից . . . . 20 կ.

(10—6)

ԽԻԹԱՐԵԱՆ ՔՈՅՐԵՐ

Իգնատիոսեան Թոյլտուութեամբ

Ընդունում են գիշերօթիկ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

7-ից 12 տարեկան

ՊԵՏՐՈՍՕՒՄ ԵՒ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

Հասցէն. Մասկովսկայա Բալկայից բարձր, Իզմայլովսկայա փողոց, սեպհական տուն, № 2. (5—4)


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ծնողներին կամ սեպհական ծերութիւնը, բաժինք աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1896 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանուորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները, գիւղէնսի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մթերանոցների, ապրանքների, կահ-կարասիքների, և այլն։


ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—49)



Bateaux a vapeur rançais „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, սեպտեմ. 3-15 ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետն է ԲՒԱՆԿԻ.

Հինգշաբթի 18-30 սեպտ. ԼԱ ԳՕԼ շոգենաւը, նաւապետն է ԼԱՊԷՐ (մտնում է Կ. Պօլիս, Մարսէլ, Հավր, Դիւնկիրհէն, Անտվերպէն և այլն. և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։

Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բաբէկնդանեանին, Սիոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։

Բագւում.—Պ. Ս. Դիլղարեանին, Կովկասեան հրապարակ։

Նովօրօսիյսկում.—պ. Մելխիօր Հերշենրօդերին։ (20—20)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

Տէր-Յովսէփեանի

(Սօլօլակ, Սադովայա փողոց, տուն № 46, Տէր-Մելիքսէթեանի)

Աշակերտների ընդունելութիւնն սկսվում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից. 15—6)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՅԱԿՈՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին Մոսկուայում

Թիֆլիզի գլխաւոր գործակալութիւնն ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ անշարժ և շարժական կայքերի

ԿԵԱՆՔԻ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

առանձին ձեռնտու պայմաններով, արտօնութիւններով, աշխատանքի անընդունակ դառնալու դէպքում. ապահովագրուողները մասնակից են ընկերութեան օգուտներին։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

ծառայողների և գործարանական բանուորների և մասնաւոր անձանց ապահովագրութիւն։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ծովով, գետերով և ցամաքային ճանապարհներով. ապահովագրութիւն շոգենաւերի և նաւերի։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ և բացատրութիւններ հաղորդվում են ընկերութեան գլխաւոր գործակալ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ՍԵՐԳԵԵՎԻ գրասենեակում, Երևանեան հրապարակի վրայ, տուն իշխ. Ցիցիանովի, № 2.

ԹԻՖԼԻԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

բաժանորդագրութիւն է բացուած Մոսկվայում պ. Գր. ՋԱՆՇԵԱՆԻ խմբագրութեամբ տպագրուող ժողովածուի „БРАТСКАЯ ПОМОЩЪ пострадавшимъ въ Турціи Армянамъ“ (ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ Թիւրքիայում վնասուած հայերի) համար գինը սովոր. թղթի վրայ 4 ռ. շքեղ թղթի վրայ 5 ռուբլի։ (10—8)


Дозволено цензурою. Тифлисъ 30-го Августа 1897 года.

Տպարան Մնացական Մարտիրոսեանցի.

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.